Այս պահին ունենք նախապատրաստվող ընտրակաշառքի հետ կապված ինչ-որ ինֆորմացիաներ, սակայն դեռեւս հստակ չէ: Ինչ վերաբերում է թոշակներին. Հայաստանում օրենսգրքով արգելված է ընտրություններից առաջ թոշակ բարձրացնելը, օրինակ՝ Բրիտանիայում արգելված է: Քանի որ արգելված չէ, իշխանությունն էլ օգտագործում է դա:

Կարդացեք՝ էջ 6

Ցեղական ձին պղտոր ջուր չի խմում. այդ ո՞վ էր, որ մեր ժողովրդին սովորեցրեց պղտոր ջուր խմելը: Մեր ազնվացեղ ազգին, որն Աստծու դեմ մենակ է կանգնած եւ մարդկության հիշողությունն է: Այն բոլոր ժողովուրդները, որ մեզ հետ ապրում էին երկրի վրա, վերացան, ձեւախեղվեցին, բայց մենք մնացինք նույնը եւ մնացինք մենակ:

Կարդացեք՝ էջ 7

Ինչո՞ւ հանկարծ բարիացան, որոշեցին սխալներն ուղղել՝ արագորեն: Ենթադրում եմ, որ ընտրություններից 3 ամիս առաջ իշխող ուժը նկատում է, որ ունի խայտառակ ցածր վարկանիշ, եւ վագրի թռիչքով փորձում է ներգրավել, գայթակղել մոտ 500 հազար ընտրողի: Կենսաթոշակառուն, որ վաղուց չէր տեսել թոշակի ավելացում, սա կգնահատի:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 32 (4167), 5 մարտ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Խորհրդարանը շուրջ երկու տարի է՝ չի կարողանում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ ընտրել եւ համալրել Հանձնաժողովում առկա թափուր պաշտոնը: Այս ընթացքում օրենսդիրների դատին բազում թեկնածուներ են ներկայացվել, սակայն՝ մեկը մյուսից ոչ կոմպետենտ, որոնք ծաղրի առարկա են դարձել խորհրդարանում «քննություն» տալու ժամանակ: Վերջերս տեղեկություն տարածվեց, որ այդ գործընթացը միտումնավոր տապալման է տարել թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի անդամ Արուսյակ Ջուլիակյանը, որը շուրջ երկու տարի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանի ընկերուհին է եւ չի ուզում այնպիսի մեկին աջակցել, որը կարող է ղեկավարել Հանձնաժողովը եւ դուրս մղել սիրելի ընկերուհուն: Բանն այն է, որ եթե նոր անդամով համալրվի Հանձնաժողովը, ապա պետք է նախագահ ընտրեն: Տեղեկացանք, որ խորհրդարանը նոր թեկնածու է «ստացել», որը, իշխանականների հավաստմամբ, ոլորտի պրոֆեսիոնալ է: Եփրեմ Կարապետյանը 2024 թվականին արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով նշանակվել էր ԱՆ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման եւ մոնիտորինգի վարչության պետ:

Օրերս սկանդալային դեպք է արձանագրվել «Արթիկ» ՔԿՀ-ում: Հսկիչների սենյակում հայտնաբերվել են լսողական սարքեր՝ «ժուչոկներ»: Հսկիչները դրանք փոխանցել են օրվա հերթապահ պատասխանատուին՝ Վարդան Բալոյանին, պահանջելով այս մասին զեկուցել ՔԿՀ պետ Արտակ Ղազարյանին: Ըստ շրջանառվող լուրերի, դրանք տեղադրել են օպերատիվ աշխատողները, որոնցից մեկն այս պահին արձակուրդում է: Իսկ արձակուրդի ժամանակ քրեակատարողական հիմնարկ մուտք գործել հնարավոր է միայն օպերատիվ բաժնի ղեկավարի թույլտվությամբ: Սարքերը, ըստ էության, տեղադրվել են, որպեսզի գաղտնալսեն, թե ինչ են խոսում հսկիչները, ում հետ են շփվում եւ այլն: Հսկիչների շրջանում սա վրդովմունքի ալիք է բարձրացրել՝ պահանջել են, որ մեղավորները պատժվեն: Մեզ ասացին, որ ծառայողական քննություն է սկսվել, ըստ գործող օրենքի՝ միայն դատարանի որոշմամբ է թույլատրվում գաղտնալսել, ուստի հսկիչները սպասում են, որ օրենքը խախտած օպերները պատասխանատվության ենթարկվեն: Միջադեպի մասին տեղեկացրել են նաեւ դատախազությանը:

Ինձ էիք՝ ինձ դառաք

Անցած օրը լսում եմ, թե ինչպես է ՔՊ-ական ուսապարկերից մեկը խրոխտ տոնով դիմում ընդդիմությանը՝ «ոչ թե Գյումրի-2 է լինելու, այլ՝ Վաղարշապատ-2»: Իսկ ինչ է եղել Վաղարշապատում: Իրենց ունեցած ողջ ադմինիստրատիվ եւ ուժային ռեսուրսները մոբիլիզացրել էին, համայնքի բնակիչներին տոտալ տեռորի ենթարկել՝ ոմանց աշխատանքից ազատել, մյուսներին՝ սպառնացել, երրորդներին՝ կաշառել: Արհեստականորեն խոշորացրել էին համայնքը՝ չարաշահելով խոշորացում անելու սկզբունքները, բերել, խոյ համայնքը կցել Էջմիածնին, որովհետեւ իրենց թեկնածուն խոյում ձայներ ուներ: Շահարկել էին թեկնածուի հոր՝ Արցախի համար կյանքը տված հերոս Մեխակ Մեխակյանի հիշատակը: Իսկ ընտրություններին մասնակցեց ընտրողների ընդամենը 45 տոկոսը, ՔՊ-ն համայնքի 70 հազար բնակչից ստացավ ընդամենը 15 հազար 200 քվե՝ մասնակիցների 48 տոկոսի ձայները, եւ միայն փոշիացված ձայների հաշվին մի կերպ՝ սողալով, ձայն փախցնելով, քրքաշ, կարողացավ հաղթանակ կորզել: Եվ սա հպարտանալու օրինա՞մ է: Այսինքն, 7-8 տարում իսպառ կորցրել են հանրության սերը, հարգանքն ու վստահությունը: Դարձել են ՀՀԾ-ից ու ՀՀԿ-ից ավելի ատելի ուժ: Նույնքան նողկալի մեթոդներ են կիրառում իշխանությունը պահելու համար, որքան նախկին իշխանություններն էին կիրառում, եթե չասենք՝ ավելին, ու դեռ հպարտանում են «Վաղարշապատ-2»-ով: Իսկ մի ժամանակ Նիկոլ Փաշինյանն ասում էր՝ որ օրը ժողովուրդը պահանջի, ես կհեռանամ, եւ այն ժամանակ ոչ ոք չէր մտածում, որ «ժողովուրդ» ասելով՝ նա նկատի ունի բառացիորեն 2 միլիոն մարդ: Ոչ ոք չէր պատկերացնում, որ նա պատրաստ է վերընտրվելու համար մարդկանց բանտերը լցնել, ԱԱԾ-ն ու ոստիկանությունն օգտագործել, մարդկանց վախի ու ինքնապաշտպանության բնազդի վրա խաղալ, որ երրորդ ժամկետի գնա:

Տեւական դեգերումներից հետո ՔՊ-ում գտել են հունիսի 7-ի համապետական ընտրությունների իրենց նախընտրական քարոզարշավի կարգախոսը, չնայած այդ մասին չեն թմբկահարում, սակայն այդ կարգախոսով պաստառներն արդեն մի քանի շաբաթ է՝ տեղ են գտել Հայաստանի քաղաքների փողոցներում: Խոսքը կապույտ ֆոնին գրված ընդամենը մեկ բառի՝ «խաղաղության» մասին է, որի տակ Փաշինյանի մատներով ցուցադրվող սրտիկ նշանն է նկարված: Մեզ պատմեցին, որ ՔՊ ակտիվում միանշանակ չեն ընդունել մեկ բառանոց կարգախոսը, այլ տարբերակներ են առաջարկել, սակայն, ըստ ամենայնի, ՔՊ-ում հասկացել են, որ ինչ միտք էլ գրեն պաստառին, իրենց թիրախավորելու են, ուստի նախընտրել են կարճ-կոնկրետ մի բառով հանդես գալ, որը, իրենց կարծիքով, անխոցելի է:

ՆՈՐ ՀՐԱՀԱՆԳ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻՆ

Մեր տեղեկություններով, ՔՊ ֆրակցիային հրահանգ է իջել՝ այսուհետ բոլոր հարթակներից խոսել անցած 8 տարիների ընթացքում կառավարության արած գործերի մասին, հնարավորինս դրանք թմբկահարել, քաղաքացիներին անընդհատ ցույց տալ, թե ինչեր են արել իրենք: Խորհրդարանում կառավարության հետ հարցուպատասխանն էլ երեկ նախընտրական քարոզարշավ էր հիշեցնում, որի ընթացքում ՔՊական երեսփոխանները նախապես համաձայնեցված հարցերով կառավարության անդամներին մղում էին ինքնագովեստի, թե որքան ահռելի աշխատանքներ են արել դպրոցաշինության, ճանապարհների կառուցման եւ այլ ոլորտներում: Մեկը մյուսին լրացնելով՝ փորձում էին տպավորություն ստեղծել, թե գործ ունենք ոչ թե ավերիչ, այլ արարիչ իշխանությունների հետ: Ոմանք այնքան էին մտել դերի մեջ, որ, չլսելով կառավարության անդամի պատասխանները, պատասխանից չբխող արձագանք էին հնչեցնում, օրինակ, Ջուլիետա Ազարյանն Արարատ Միրզոյանին շանս էր տվել խոսել, Մերձավոր Արեւելքի պատերազմով պայմանավորված, տարբեր երկրներում մեր հայրենակիցների տունդարձի մասին: Միրզոյանն էլ հատ-հատ թվարկեց, թե որ երկրում որքան հայ կա, ինչ խնդիրներ ունեն, ասաց՝ բոլորին օգնել են, հոգացել, որ ավտոբուսներով հասնեն Օման, այնտեղից վերադառնան հայրենիք, եւ գործընթացը շարունակվում է: Տիկին պատգամավորն «արձանագրեց», թե իրականությունից, փաստորեն, հեռու են մամուլում տեղ գտած վերնագրերը, որ այս օրերին մեր հայրենակիցները ստիպված են մի քանի անգամ թանկ ավիատոմսեր գնել վերադարձի համար՝ կառավարությունն այդ հարցերը հոգում է: Միրզոյանը հակադարձեց, թե ինքը նման բան չի ասել, եւ կրկնեց, թե խոսքն ավտոբուսներով տեղափոխման մասին է:

Հարցազրույց ՌԴ Պետդումայի ԱՊՀ հարցերով հանձնաժողովի փոխնախագահ ***Կոնստանտին Զատուլինի*** *հետ*



- Ուզում ենք լսել Ձեր կարծիքը՝ մի քանի ակտուալ հարցի շուրջ: Մեր իշխանությունները, Նիկոլ Փաշինյանը սիրաշահում են Արեւմուտքին եւ ԱՄՆ-ին՝ Թրիփ նախագիծն են առաջ հրում, ցանկանում են դադարեցնել Հարավկովկասյան երկաթուղու լիցենզիան, Թրամփի հետ ուզում են մոդուլային ատոմակայան կառուցել, Սոլովյովի հաղորդումը փակեցին, չեն վերականգնում ՀԱՊԿ-ին լիարժեք մասնակցությունը: Մյուս կողմից՝ Փաշինյանն ասում է, թե ջերմ հարաբերություններ ունի Պուտինի հետ: Ըստ Ձեզ, ո՞րն է իրականությունը:

- Ինչ վերաբերում է Պուտինի հետ Փաշինյանի լավ հարաբերություններին, ապա դրանք ինչպիսին էլ լինեն, չեն հերքում այն փաստը, որ Հայաստանի կառավարությունը հեռանում է Ռուսաստանից, չի հանդիսանում, ըստ էության, Ռուսաստանի դաշնակիցը, ինչի մասին հրապարակավ հայտարարվել է ո՛չ երեկ, ո՛չ այսօր, այլ՝ սկսած 22 թվականից տարբեր եվրոպական մայրաքաղաքներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում, որտեղ ասվել է, որ Հայաստանը չի հանդիսանում Ռուսաստանի դաշնակիցը, օրինակ, ՌԴ քաղաքացիներին, որոնք այսօր դատվում են, Սամվել Կարապետյանին: Նրա շողոքորթումը Թրամփի եւ նրա ծրագրերի հանդեպ, Հայաստանի սուվերենությունը հանձնելու նրա պատրաստակամությունը՝ Զանգեզուրի միջանցք կամ Թրիփ ուղու շրջանակներում, իմ կարծիքով, ամենեւին չի համապատասխանում Ռուսաստանի երկարաժամկետ շահերին, որին պարոն Թրամփը, պարոն Ալիեւի հետ, փորձում է հեռացնել Կովկասից: Նրա համախոհները խորհրդարանում ընդունեցին մերկապարանոց օրենք՝ «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին», շատ լավ գիտակցելով, որ այդպիսի «պարի» հրավեր անգամ չեն ստացել ԵԽ-ի կողմից ու չեն էլ ստանա: Ինչո՞ւ է դա արվում: Որպեսզի միակողմանի արեւմտակենտրոն գիտակցություն ձեւավորեն հայերի մոտ, որ մարդիկ, հատկապես երիտասարդները, համարեն, որ Հայաստանի ապագան Եվրոպական Միությանն անդամակցության համար մաքառումն է, եւ փախչեն Ռուսաստանի, Եվրասիական միության հետ կապերից: Հեգնանքն այն է, եթե ավելին չասեմ, որ հենց ԵԱՏՄ-ին անդամակցում՝ ԱՄՆ-ն պարտավորություն է ստանձնել՝ կռվել Հայաստանի կողմից բոլո՛ր կոնֆլիկտներում, որոնք կարող են լինել, պաշտպանե՞լ Հայաստանին հարձակման դեպքում: Որքան ես գիտեմ, ուղիղ հարց եղել է այդ մասին, արդեն Վենսի այցից հետո, եւ ամերիկյան լսարանին պատասխանել են՝ մենք չունենք որեւէ պարտավորություն: Իսկ Ռուսաստանը եւ Հայաստանը, առաջվա պես, միմյանց հանդեպ նման պարտավորություններ ունեն: Այդ պարտավորությունները Հայաստանի կառավարությունն իր վրայից գցում է, դավաճանում է ամեն օր եւ ընթացքում ստում է, ինչպես ստում էր պարոն Սիմոնյանը՝ Մոսկվա կատարած իր այցի ժամանակ, փետրվարին, ասելով՝ ես ոչինչ չեմ ասել, я ничего не говорил, и хата не моя: Անգամ պատրաստ է դատի տալ նրանց, ովքեր հակառակն են պնդում: Նրան հաջողություն եմ ցանկանում: Ճիշտ է, նա այդ դատը կշահի միայն մի դեպքում՝ եթե հենց ինքը լինի դատավորը:

- Եվրոպան, միանշանակ, իր գործողություններով հասկացնում է, որ Հայաստանի ապագա վարչապետի աթոռին կցանկանար տեսնել Փաշինյանին: Ռուսաստանի դիրքորոշումը հստակ չէ: Կա՞մ մի գործիչ, որին Ռուսաստանը կցանկանար տեսնել որպես ՀՀ ղեկավար:

- Ոչ միայն Եվրոպան, այլեւ Վենսն է այդ մասին ասել՝ որ աջակցում է Փաշինյանին: Բայց Ռուսաստանն այդպես չի արտահայտվում նախագահի կամ արտգործնախարարի, կամ վարչապետի մակարդակով: Բայց մի՞թե հայերի պես խելացի ժողովուրդը կասկածում է, որ Ռուսաստանն ամենաքիչն է շահագրգռված իր ազգային շահերի առումով, որ Փաշինյան կոչվող «հրաշքը» շարունակվի:

- Բայց, մյուս կողմից, դուք կարծես թե պաշտպանում եք ռուսամետ ուժերին՝ առաջադրվել եւ փոշիացնել ձայները, հօգուտ Փաշինյանի, օրինակ՝ Վահան Բաբայան-Վաղարշակ Հարությունյան տանդեմին: Այդ մարդկանց շանսերը մեծ չեն ապագա ընտրություններում:

- Հենց այդ պատճառով էլ Ռուսաստանը հրապարակավ չի հայտնում իր նախապատվությունների մասին՝ համարելով, որ այդ հարցը հայերը պետք է ինքնուրույն լուծեն:

- Իրանի շուրջ ծավալվող իրադարձությունների ֆոնին ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ադրբեջանի դիրքերի ամրապնդումը մեր ռեգիոնում չի՞ նշանակում, որ Ռուսաստանը ձեռքը թափ է տվել եւ դուրս է գալիս Կովկասից, մասնավորապես՝ մեր տարածաշրջանից:

- Ռուսաստանը երբեք ձեռքը թափ չի տվել Կովկասի վրա: Ռուսաստանին փորձում են դուրս մղել Կովկասից եւ հասնում են ինչ-որ սեզոնային հաջողությունների, չեմ թաքցնի, ինչում նաեւ մեր սխալներն ու վրիպումներն են դեր խաղացել, դա ճիշտ է: Բայց դա ամենեւին չի նշանակում, թե Ռուսաստանում որեւէ մեկը պատրաստվում է մոռանալ Կովկաս մտնելու պատմությունը: Ի դեպ, մենք եկանք Կովկաս, մեծ հաշվով՝ վրացիների եւ հայերի հրավերով, նրանց հարեւաններից պաշտպանելու համար, որոնք նրանց ֆիզիկապես ոչնչացնում ու փորձում էին ասիմիլացնել: Ու Ռուսաստանը կանի դա: Այդպիսին է ոչ միայն իմ տեսակետը, այլեւ մեր ղեկավարի, Ռուսաստանի Դաշնության նախագահի տեսակետը: Ես ականատես եմ եղել. տարիներ առաջ՝ մինչփաշինյանական շրջանում, ՌԴ նախագահ Պուտինը, պաշտոնական այցի ժամանակ ելույթ ունենալով Գյումրիում, այն ժամանակվա նախագահ Սերժ Սարգսյանի ներկայությամբ հիշեց, որ Գյումրիում, Ալեքսանդրապոլում էր ծառայել մեր հայտնի՝ «Սլավոնուհու հրաժեշտը» երգի հեղինակը՝ Ագապկինը: Պուտինն ասաց՝ միայն նկատի ունեցեք, որ Ագապկինը հրաժեշտ ասելով բոլորովին այլ բան նկատի ուներ, իսկ մենք Կովկասից ոչ մի տեղ չենք պատրաստվում հեռանալ: Եվ ես ոգեշնչվում եմ այդ դրվագով, երբ արտահայտվում եմ կամ գործում եմ հանուն Կովկասում ՌԴ շահերի եւ շարունակելու եմ դա անել:

- Վերջին հարցը՝ այսօր դուք վերագնահատո՞ւմ եք Ռուսաստանի վարքագիծը, որը դուրս եկավ Արցախից: Կա՞մ գիտակցում, որ դա սխալ քայլ էր, եւ պետք չէր հանձնել Արցախը:

- Սխալը ոչ թե այդ պահին էր, այդ պահին արդեն նախկին սխալների հետեւանքներն էին: Իսկ սխալը, իմ կարծիքով, այն էր, որ 2020 թվականի պատերազմը տեղի ունեցավ: Ռուսաստանը պետք է ավելի վճռական գործեր՝ այդ պատերազմը կանխելու համար: Ցավոք, դա տեղի չունեցավ: Իսկ մնացյալը հետեւանք էր:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԱՎԵԼԻ ՎՃՌԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

հատուկ ռազմական գործողության հարցում: Եթե նա դաշնակից չէ, ապա այդ դեպքում ի՞նչ է, ելնելով նրա պարտավորություններից, այդ թվում: Պարոն Փաշինյանը եւ նրա համախոհները սիրում են մեղադրել Ռուսաստանին այն բանի համար, որ նա 22 թվականին չի կռվել Հայաստանի կողմից, երբ ադրբեջանցիները ներխուժեցին ՀՀ տարածք, բայց դրա հետ մեկտեղ չի մեղադրում ինքն իրեն այն ամենի համար, որ հասցրել է ինքը, նաեւ՝ մյուսները, խոսել Ռուսաստանի եւ նրա կոնֆլիկտի մասին Արեւմուտքի եւ Ուկրաինայի հետ:

- Կարծում եք, նա չպե՞տք է պահանջեր իր դաշնակցից՝ կատարել պարտավորությունները:

- Պահանջելով մեզնից պարտավորությունների կատարում, նա՝ ինքը, Ռուսաստանի հանդեպ երբեք ոչ մի դաշնակցային պարտավորություններով չի առաջնորդվել: Այն հակասական քայլերը, որ Դուք թվարկեցիք, մենք կարող ենք բազմապատկել մինչեւ հավերժություն: Նրա պայքարը երկրի ներսում՝ իր վերընտրվելու համար, ենթադրում է հարվածներ հասցնել հայկական եկեղեցուն, այն մարդկանց, որոնք լսելով, Ռուսաստանի հետ հարաբերություններով է Հայաստանի տնտեսությունը շահույթ ունենում, հետեւապես, այդ հարաբերություններից շահում, «աչոկ է ստանում» հենց ինքը՝ Փաշինյանը: Ցանկացած տեսակի հանդիպումներն ու ձեռքսեղմումները չեն կարող փոխարինել գործին: Փաշինյանին գործով էլ դատում են, իսկ նրա գործերը միանշանակ են, պետք չէ գուշակների մոտ գնալ, համլետյան հարց տալ՝ լինել, թե չլինել: Փաշինյանը ստեղծագործաբար իրագործում է այն գիծը, որը նախանշել էր, երբ դեռ ո՛չ վարչապետ էր, ո՛չ պատգամավոր: Այդ ամենը չի պահանջում ապացույցներ, նա այս իմաստով հետեւողական է: Նա որոշ ժամանակ, ասենք՝ 2018-2022 թթ., ստիպված է եղել բառեր արտասանել, որոնք իրականում չէր կիսել: Ինչպեսեւ այսօր, պնդումը, թե բարեկամական հարաբերություններ ունի Պուտինի հետ, նույնպես ստիպված է անում, այն քննադատության ֆոնին, որը որ ծավալվում է մարդկանց կողմից, ովքեր չեն հասկանում, թե հանուն ինչի է Հայաստանը ոչնչացնում հարյուրամյակների հարաբերությունները: Հարց է ծագում՝ ԱՄՆ-ն պարտավորություն է ստանձնել՝ կռվել Հայաստանի կողմից բոլո՛ր կոնֆլիկտներում, որոնք կարող են լինել, պաշտպանե՞լ Հայաստանին հարձակման դեպքում: Որքան ես գիտեմ, ուղիղ հարց եղել է այդ մասին, արդեն Վենսի այցից հետո, եւ ամերիկյան լսարանին պատասխանել են՝ մենք չունենք որեւէ պարտավորություն: Իսկ Ռուսաստանը եւ Հայաստանը, առաջվա պես, միմյանց հանդեպ նման պարտավորություններ ունեն: Այդ պարտավորությունները Հայաստանի կառավարությունն իր վրայից գցում է, դավաճանում է ամեն օր եւ ընթացքում ստում է, ինչպես ստում էր պարոն Սիմոնյանը՝ Մոսկվա կատարած իր այցի ժամանակ, փետրվարին, ասելով՝ ես ոչինչ չեմ ասել, я ничего не говорил, и хата не моя: Անգամ պատրաստ է դատի տալ նրանց, ովքեր հակառակն են պնդում: Նրան հաջողություն եմ ցանկանում: Ճիշտ է, նա այդ դատը կշահի միայն մի դեպքում՝ եթե հենց ինքը լինի դատավորը:

- Եվրոպան, միանշանակ, իր գործողություններով հասկացնում է, որ Հայաստանի ապագա վարչապետի աթոռին կցանկանար տեսնել Փաշինյանին: Ռուսաստանի դիրքորոշումը հստակ չէ: Կա՞մ մի գործիչ, որին Ռուսաստանը կցանկանար տեսնել որպես ՀՀ ղեկավար:

- Ոչ միայն Եվրոպան, այլեւ Վենսն է այդ մասին ասել՝ որ աջակցում է Փաշինյանին: Բայց Ռուսաստանն այդպես չի արտահայտվում նախագահի կամ արտգործնախարարի, կամ վարչապետի մակարդակով: Բայց մի՞թե հայերի պես խելացի ժողովուրդը կասկածում է, որ Ռուսաստանն ամենաքիչն է շահագրգռված իր ազգային շահերի առումով, որ Փաշինյան կոչվող «հրաշքը» շարունակվի:

- Բայց, մյուս կողմից, դուք կարծես թե պաշտպանում եք ռուսամետ ուժերին՝ առաջադրվել եւ փոշիացնել ձայները, հօգուտ Փաշինյանի, օրինակ՝ Վահան Բաբայան-Վաղարշակ Հարությունյան տանդեմին: Այդ մարդկանց շանսերը մեծ չեն ապագա ընտրություններում:

- Հենց այդ պատճառով էլ Ռուսաստանը հրապարակավ չի հայտնում իր նախապատվությունների մասին՝ համարելով, որ այդ հարցը հայերը պետք է ինքնուրույն լուծեն:

- Իրանի շուրջ ծավալվող իրադարձությունների ֆոնին ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ադրբեջանի դիրքերի ամրապնդումը մեր ռեգիոնում չի՞ նշանակում, որ Ռուսաստանը ձեռքը թափ է տվել եւ դուրս է գալիս Կովկասից, մասնավորապես՝ մեր տարածաշրջանից:

- Ռուսաստանը երբեք ձեռքը թափ չի տվել Կովկասի վրա: Ռուսաստանին փորձում են դուրս մղել Կովկասից եւ հասնում են ինչ-որ սեզոնային հաջողությունների, չեմ թաքցնի, ինչում նաեւ մեր սխալներն ու վրիպումներն են դեր խաղացել, դա ճիշտ է: Բայց դա ամենեւին չի նշանակում, թե Ռուսաստանում որեւէ մեկը պատրաստվում է մոռանալ Կովկաս մտնելու պատմությունը: Ի դեպ, մենք եկանք Կովկաս, մեծ հաշվով՝ վրացիների եւ հայերի հրավերով, նրանց հարեւաններից պաշտպանելու համար, որոնք նրանց ֆիզիկապես ոչնչացնում ու փորձում էին ասիմիլացնել: Ու Ռուսաստանը կանի դա: Այդպիսին է ոչ միայն իմ տեսակետը, այլեւ մեր ղեկավարի, Ռուսաստանի Դաշնության նախագահի տեսակետը: Ես ականատես եմ եղել. տարիներ առաջ՝ մինչփաշինյանական շրջանում, ՌԴ նախագահ Պուտինը, պաշտոնական այցի ժամանակ ելույթ ունենալով Գյումրիում, այն ժամանակվա նախագահ Սերժ Սարգսյանի ներկայությամբ հիշեց, որ Գյումրիում, Ալեքսանդրապոլում էր ծառայել մեր հայտնի՝ «Սլավոնուհու հրաժեշտը» երգի հեղինակը՝ Ագապկինը: Պուտինն ասաց՝ միայն նկատի ունեցեք, որ Ագապկինը հրաժեշտ ասելով բոլորովին այլ բան նկատի ուներ, իսկ մենք Կովկասից ոչ մի տեղ չենք պատրաստվում հեռանալ: Եվ ես ոգեշնչվում եմ այդ դրվագով, երբ արտահայտվում եմ կամ գործում եմ հանուն Կովկասում ՌԴ շահերի եւ շարունակելու եմ դա անել:

- Վերջին հարցը՝ այսօր դուք վերագնահատո՞ւմ եք Ռուսաստանի վարքագիծը, որը դուրս եկավ Արցախից: Կա՞մ գիտակցում, որ դա սխալ քայլ էր, եւ պետք չէր հանձնել Արցախը:

- Սխալը ոչ թե այդ պահին էր, այդ պահին արդեն նախկին սխալների հետեւանքներն էին: Իսկ սխալը, իմ կարծիքով, այն էր, որ 2020 թվականի պատերազմը տեղի ունեցավ: Ռուսաստանը պետք է ավելի վճռական գործեր՝ այդ պատերազմը կանխելու համար: Ցավոք, դա տեղի չունեցավ: Իսկ մնացյալը հետեւանք էր:

ՄԻՀՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ՝ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

2025-ի տարեվերջին Հակակոռուպցիոն կոմիտեից հաստատել էին տեղեկությունները, որ ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանի ազգականի՝ «Միկշինի» սեփականատեր Տիգրան Հարությունյանի եւ նրա հարազատների նկատմամբ քրեական հետապնդումներ են հարուցվել. «Ի պատասխան հայտնում ենք, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ նախկին գլխավոր հարկադիր կատարողի վերաբերյալ քննվող քրեական վարույթով հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել նրա ազգականների նկատմամբ: Վերջիններս մեղադրվում են պաշտոնեական լիազորությունների չարաշահմանն օժանդակելու, ինչպես նաեւ՝ խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով վատնմանն օժանդակելու մեջ: Մեղադրյալներից երկուսը ձերբակալված են»: Գործով նախաքննությունը 2 ամսում ավարտվել է, այժմ Տիգրան, Գեւորգ եւ Էդուարդ Հարությունյանները դատարանում են՝ մեղադրյալի աթոռին: Ռուսաստանում գտնվող, առաջիկա ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած, ՔՊ-ական իշխանություններին եւ Նիկոլ Փաշինյանին խստորեն քննադատող Միհրան Պողոսյանը եւս այս քրեական գործով անցնում է, թեպետ նա դատավարական կարգավիճակ չունի:

Ի՞նչ հարցում են մեղադրվում Հարությունյանները. Տիգրան Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, «միջոցներ տրամադրելով եւ խոչընդոտները վերացնելով, 2009 թ. մարտի 2-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում օժանդակել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցրած, մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ Միհրան Պողոսյանի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով, վատնման եղանակով ուրիշի խոշոր չափերով գույքի հափշտակություն կատարելուն»: Գեւորգ Հարությունյանին նմանատիպ մեղադրանք է առաջադրվել, միայն օժանդակելու ժամկետն է այլ՝ «2012 թվականի հուլիսի 4-ից մինչեւ 2016 թվականի ապրիլի 22-ն ընկած ժամանակահատված»: Էդուարդ Հարությունյանին էլ է նույն մեղադրանքն առաջադրվել, որ նա օժանդակել է չարաշահելուն, «որն անզգուշությամբ ծանր հետեւանքներ է առաջացրել»: Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրված երկրից բացակայելու արգելքը: Փորձեցինք զրուցել Տիգրան Հարությունյանի պաշտպան **Երեմ Սարգսյանի** հետ, որը նշեց՝ քանի որ այս քրգործի հետ կապված առաջին անգամ է իրեն լրագրող դիմում, չի կարող հարցերին պատասխանել, մինչեւ չհամաձայնեցնի իր պաշտպանյալի հետ:

Ի՞նչ ինստիտուցիոնալ

Աժ հարցուպատասխանի ժամանակ երեկ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի քանի անգամ հայտարարեց՝ մենք ինստիտուցիոնալ երկիր ենք, ամեն կառույց զբաղվում է իր գործով: Բայց մենք օրական բազմաթիվ փաստերի ենք առնչվում, որից երեւում է, որ մեր երկրում ոչ մի կառույց իր գործով զբաղված չէ, այդ թվում՝ վարչապետը: Օրինակ, ինչո՞ւ է կառավարության ղեկավարը զբաղվում Հայ առաքելական եկեղեցու գործերով, փորձում կաթողիկոսին փոխել, կարգալույծ արված եպիսկոպոսներին ճանաչում է որպես թեմերի առաջնորդներ, սրբազաններին հանցագործ է անվանում՝ առանց դատարանի որոշման: Ինչո՞ւ է հայտարարում, որ կառավարությունն ինքն է, մինչդեռ ՀՀ Սահմանադրության մեջ կառավարության բոլորովին այլ բնորոշում կա: Ինչո՞ւ է միանձնյա աշխատավարձեր ու պարգեւավճարներ բաշխում, երբ օրենսդրությամբ դրա բաշխման բոլորովին այլ կարգ է սահմանված, ինչո՞ւ են որպես երկրի ղեկավար նշում Նիկոլ Փաշինյանին, երբ ՀՀ սահմանադրությամբ երկրի ղեկավարը՝ պետության գլուխը, հանրապետության նախագահն է: Եթե ինստիտուցիոնալ երկիր ենք, Նիկոլ Փաշինյանն ինչո՞ւ էր կոպտորեն խախտում ՀՀ սահմանադրությունը, փակում դատարանների դռները, միջամտում քրեական վարույթներին, կառավարության նիստում ուղիղ հրահանգներ տալիս իրավապահ կառույցներին, sms-ներով աշխատանքից նախարար ու ԲԴԽ նախագահ ազատում, պահանջում, որ պատգամավորը վայր դնի մանդատը, հայտարարում, որ ԱԱԾ-ն իրավունք ունի «այցելել» եւ զրուցել հոգեւորականների հետ... Եվ այդ ամենի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվում:

ՏԵՍՆԵԼՈՎ ԻՄ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ, ԻՄ ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ԼԻՆԵԼԸ՝ ԻՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՏԱՐԿԵԼ Է, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԼԻՆԵԼ

Ներկուսակցական ընտրություններում ՔՊ «մերժվածներից» մեկն էլ պատգամավոր **Անուշ Քլոյանն** է՝ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին զոհ դարձած Գոռ Քլոյանի քույրը, որը ներկուսակցական քվեարկության ժամանակ մոտ 100 ձայն է ստացել: Փաշինյանի թիմն այդ իրադարձությունը՝ մարտի 1-ը, այլեւս պատմության գիրկն է ուղարկել, եւ իշխանական ֆրակցիայի անդամ Քլոյանին էլ են որոշել տուն ուղարկել: Այս եւ այլ հարցերի շուրջ կարճ զրույց ունեցանք տիկին Քլոյանի հետ, որը, ի դեպ, չէր ցանկանում զրուցել ներկուսակցական ընտրությունների մասին:

- Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը իշխանության եկան «մարտի 1»-ով, սակայն 8 տարի անց Ձեր թիմակիցները չաջակցեցին մարտի 1-ի զոհերից մեկի հարազատին, որ նորից պատգամավոր դառնա: Ինչպե՞ս ընդունեցիք այս փաստը:

- Ես ոչ մի վատ բան չեմ լսել այդ ընտրությունների մասին, ամեն ինչ եղել է արդար, ժողովրդավար ընտրություն: Եվ հետո՝ ի՞նչ է նշանակում՝ «մարտի 1»-ով եկավ իշխանության:

- 2008 թվականի հայտնի իրադարձությունները դարձրին իրենց քաղաքական կապիտալը, ժողովրդին բացատրեցին, որ չի կարող «մարտի 1» գործած իշխանությունը մնալ կառավարման ղեկին եւ այլն...

- Բայց դա ի՞նչ կապ ունի ժողովրդավար ընտրության հետ:

- Ձեր թիմը հայտարարում է, թե արժեքները չի ուրացել, Դուք էլ այդ թիմում եք եւ այս խորհրդարանում ընդգրկվել եք հենց դրա շնորհիվ, որ մարտի 1-ի զոհերից մեկի հարազատն եք, այսպես ասած՝ այդ դեպքերի սիմվոլը:

- Ես ասում եմ՝ ներքին ժողովրդավար ընտրություն է եղել, մարդիկ, բոլոր մեր պատվիրակներն ում ցանկացել են, ընտրել են, ում կարող ես ասել ա կամ՝ բ, ոչ, ոչ, համաձայն չեմ: Մնացածը Ձեր մեկնաբանությունն է, ավել ոչինչ: Ո՞վ է ասել, որ ես մարտի 1-ի սիմվոլն եմ, ո՞վ է ասել, որ ես աստղ եմ: Բացարձակ:

- Բա Դուք ինչի՞ համար էիք հայտնվել ՔՊ ցուցակում:

- Ես ոչ թե հայտնվել եմ, այլ եղել եմ Երեւանի ավագանի, եւ այդ ամենը տեսնելով, հասկանալով իմ քաղաքականացված լինելը, իմ ազնվությունը, իմ պարտաճանաչ լինելը՝ իմ կուսակցությունը դիտարկել է ինձ, որ կարող եմ պատգամավոր լինել, բարձրացնել ժողովրդի ձայնը, որովհետեւ, որպես ավագանի, շատ խնդիրներ եմ բարձրաձայնել, շատ հարցերի լուծումներ տվել, այդ ամենը տեսնելով՝ ինձ գնահատել եւ ընդունել են:

- Ուզում եք ասել, որ Գոռ Քլոյանի գործոնը Ձեր քաղաքական կարիերայում դեր չի խաղացել:

- Սիրելիս, նախ՝ «մարտի 1»-ը միայն Քլոյան Անուշինը չէր, դա համայն հայության ցավն էր, վիշտն էր, այն, ինչը ժողովուրդը տեսավ, հասկացավ, որ մարդկանց խոսելու ազատությունն առաջ մղելու համար նախկին իշխանությունը գնդակահարեց Երեւանի կենտրոնում: Դա էր մարտի 1-ը:

- Ես հենց դա էի ասում, որ ձեր թիմում ժամանակին շատ զգայուն թեմա էր այս թեման, դրան առնչվող մարդկանց էլ առանձնակի ուշադրություն էին դարձնում, իսկ հիմա Ձեզ մերժել են:

- Ոչ, սիրելիս, եղել է ժողովրդավար ընտրություն, գուցե ես ոչ միայն հանրության հետ պետք է աշխատեի, այլ գուցե շատ աշխատեի նաեւ իմ կուսակցականների հետ. ես այդ ամենից վերլուծություն կանեմ:

- Բա ասում էիք՝ դեռ այն գլխից լավ ավագանի եմ եղել, ինձ տեսել, գնահատել են...

- Գուցե չեմ հասցրել գնալ, մարզային մեր պատվիրակներին տեսնել, ամբողջ հանրապետությունում ինձ ճանաչում են, վստահ եմ՝ մարզերում էլ են ճանաչել, բայց գուցե պահանջում էին, որ իրենց հետ էլ աշխատեի:

- Ի՞նչ եք անելու «հաջորդ կյանքում», առանց պատգամավորի մանդատի:

- Աստված մեծ է՝ մի լույս կբացվի, ես կրթությամբ մանկավարժ եմ, հազար գործ կարող եմ անել:

- Իսկ մնալու եք ՔՊ-ի՞ հետ, թե՞...

- Իհարկե, մնալու եմ թիմի հետ, սա իմ կուսակցությունն է, ՔՊ-ն իմ տունն է, ես ինձ շատ լավ եմ զգում, սիրված եմ, բացառված է՝ սիրված չլինեմ, եւ անհնարին է, որ ինձ չգնահատեն:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՔՅԱԲԱԲ ԱՌ ՔՅԱԲԱԲ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՊՈՊՈՒԼԻԶՄՆ ԱՅԼԵՎՍ ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ

Տիկոլ Փաշինյանն իր թիմակիցների հետ ակտիվ քարոզարշավի փուլ է մտել: Շաբաթ-կիրակի օրերին նրանք այցելեցին մարզեր, կարկանդակ ու եգիպտացորեն կերան, քաղաքացիներին բազմաթիվ խոստումներ տվեցին: Ակտիվ քարոզարշավից անմասն չէ նաեւ ընդդիմությունը, որը նույնպես այցելում է մարզեր, համախոհների հետ է հանդիպում, տարաբնույթ խոստումներ տալիս: Զրուցել ենք քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանի** հետ:

- Ի՞նչ պրոցեսներ են ընթանում ներքաղաքական կյանքում: Փաշինյանը, որը մի քանի ամիս առաջ պնդում էր, թե իբր թոշակառուն գումար ծախսելու տեղ չունի, այժմ թոշակ է բարձրացնում, Զրային կոմիտեն 70 միլիոն եվրոյի վարկ է վերցնում, որ ջրամատակարարման հարց լուծի, մարզեր են այցելում, հասարակ երեւալու համար կարկանդակ են ուտում եւ այլն:

- Դասական նախընտրական շրջան է այժմ, երբ բոլորը միայն խոստումներ են տալիս, որոնք շատ հաճախ թվում են անիրականանալի, մեծ խոստումներ, սիրո խոստովանություն եւ այլն: Պոպուլիզմի ժամանակաշրջանում ենք ապրում, եւ շատ ցավալի է, որ հենց այս փուլում տարածաշրջանում պայթյունավտանգ իրավիճակ է, իսկ Հայաստանը, կարեւոր հարցերը թողած, առաջնորդվում է պեռաշկի ուտելու եւ ասֆալտ անելու օրակարգերով: Սա շատ ցավալի իրավիճակ է, ամեն դեպքում՝ նախընտրական իրական քարոզարշավը դեռ չի սկսվել: Իրականում, մեր ժողովրդին ավելի շատ հետաքրքրում են ոչ թե թոշակներն ու կարկանդակները, այլ՝ արտաքին քաղաքական հարցերը, քանի որ բոլորս էլ լավ հասկանում ենք, որ առաջիկա ընտրությունները լինելու են ճամփաբաժանային, եւ կարեւոր է լինելու հասկանալ, թե որ ուղղությամբ է առաջ շարժվելու Հայաստանը, որ վեկտորով: Թոշակների բարձրացում եւ այլն. այդ հարցերը թեպետ որոշակի առումով մարդկանց հետաքրքրում են, սակայն մարդիկ հասկանում են, որ դրանք չեն առաջնային ու կարեւորագույն հարցերը: Ամենակարեւոր հարցերը կապված են անվտանգության հետ, մեր ժողովրդին ավելի շատ հետաքրքրում է, թե այս բուռն ժամանակաշրջանում Հայաստանը որ ուղղության վրա է գտնվելու եւ որքանով է լինելու անվտանգ եւ այլն:

- Բայց Փաշինյանն ու իր պատգամավորներն ասում են, թե հասել են այնպիսի խաղաղության, որ սահմաններին անգամ մի կրակոց չի հնչում: Սա բավարար չէ՞, որպեսզի հանրության ոչ այնքան գրագետ զանգվածը, որը սարսափում է պատերազմից, հավատա, որ խաղաղությունը եկել է:

- Բավարար է, բայց, ինչպես ասացիք՝ ոչ գրագետ զանգվածի համար, իսկ գրագետ զանգվածը հասկանում է, թե իրականում ինչ է կատարվում, հիշում է Ադրբեջանի այն խոսքերը, որ ՀՀ իշխանություններին տալիս են նախընտրական առավելություններ, եւ առնվազն գիտակից զանգվածը հասկանում է, թե իրականում ինչ է տեղի ունենում: Ես հույս ունեմ, որ մեր հասարակության գերակշռող զանգվածը գրագետ է:

- Ի՞նչ կասեք «թափառող ձայներ» ասվածի մասին: Օրինակ՝ թոշակների բարձրացումը կարո՞ղ է ազդել այն մարդկանց վրա, որոնք չեն կողմնորոշվել, տատանվում են:

- Նախ, պետք է հասկանալ մի բան՝ այդ թոշակները Փաշինյանն իր գրպանից չի տալիս: Տալիս է հարկատուների գրպանից: Չեմ կարծում, թե այդ հանգամանքը մեծ ազդեցություն կարող է թողնել՝ որպես ընտրակաշառք: Որքան էլ որ մարդկանց սոցիալական վիճակը վատ է, միեւնույն է՝ մարդիկ գիտակցում են, որ հիմնական խնդիրը կապված է անվտանգության հետ: Մարդիկ վերլուծում են Իրանում տեղի ունեցող պրոցեսները եւ հասկանում, որ Իրանը եւս կատարեց ԱՄՆ-ի պահանջները, զիջեց, սակայն, միեւնույն է, պատերազմն անխուսափելի եղավ: Բոլորն էլ հասկանում են, որ անվերջ զիջելը եւ տալը խաղաղության երաշխիք չեն: Մեծ հաշվով, իշխանությունների արտաքին քաղաքական ուղղվածությունը խոցելի է, եւ դա մարդիկ հասկանում ու տեսնում են, սակայն այդ ամենի դեմ ոչինչ չեն կարող անել: Ջուրը, թոշակը, մեծ հաշվով, մարդկանց համար առաջնային հարցեր չեն: Մենք այդ փուլն անցել ենք վաղուց: Հասարակությունը հասկացել է, թե ինչ հետեւանքներ կարող է կրել, եթե հավատա պոպուլիզմին, եթե առաջնորդվի այն խոստումներով, որ քյաբաբ առ քյաբաբ պետք է վերադարձնել պետությանը, եւ այլն: Դա էժան պոպուլիզմ է, որը երկրորդ անգամ չի աշխատելու:

- Իսկ ի՞նչ կասեք ընդդիմության մասին:

- Կարծում եմ, որ ընդդիմությունն առայժմ իր քարոզարշավներում առաջնորդվում է իշխանությունների թելադրած օրակարգով՝ թոշակ, աշխատավարձ, հարկեր եւ այլն, սակայն ընդդիմությունը խոցելի է այն առումով, որ դեռեւս արտաքին քաղաքական ուղղվածության մասին հստակ չի խոսել: Այն, ինչ ասում է ընդդիմությունը, կարեւոր է, սակայն, քանի որ հիմնական խնդիրները կապված են անվտանգության հետ, պետք է անպայման խոսել արտաքին վեկտորի մասին:

- Ինչպե՞ս դա անեն:

- Դա իրենք պետք է ասեն, ես ենթադրում եմ, որ ունեն նման ռազմավարություն՝ մշակված: Իրենց խնդիրն այն է, թե ինչպես այդ ամենը հասարակության համար ընկալելի ներկայացնել:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿՊՐԻԼԻ 24

ՄԻՆՉԵՎ ՄԵԿ ԱՄԻՍ՝ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏՔ Է ԱՎԱՐՏՎԱԾ ԼԻՆԻ

Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության հուշահամալիրի համահեղինակ, ճարտարապետ Արթուր Թարխանյանի դուստրը՝ ճարտարապետ Անահիտ Թարխանյանը, դեռ նախորդ տարվա աշնանն էր ահազանգել ցեղասպանության հուշակոթողի՝ Ծիծեռնակաբերդի վերանորոգման անվան տակ իրականացված ավերածության մասին: Նշել էր, որ անհասկանալի է, թե

մի ճարտարապետ, որը չունի համապատասխան մասնագիտական փորձ, որ մի քանի օր առաջ է դարձել գլխավոր ճարտարապետ, ինչպես է նախագծում եւ վերանորոգում Եղեռնի հուշահամալիրը: Նկատի ուներ համալիրի նորոգման գործընթացին մասնակցող Սաշուր Քալաշյանին:

«Ընդամենը նուրբ խոզանակներով պետք էր այդ աղը մաքրել, մի հատ լվանալ, չորացնել ֆենով եւ հետագայում՝ հատուկ հիդրոֆոբ նյութեր կան, որոնցով պետք է մշակել այդ հատվածները: Այդ նյութերը թանկարժեք են, բայց հաստատ մի քանի անգամ ավելի էժան են, քան այն մեթոդաբանությունը, որ ընտրվել է այսօր Եղեռնի հուշարձանի ռեստավրացիայի համար: Ժամանակի մեջ մենք կծախսեինք, ենթադրենք, 1-2 ամիս ուսումնասիրության վրա, մեկ ամիս կծախսեինք վերանորոգման, մաքրելու վրա, որպեսզի այս սպիտակ աղակալումները քարերի վրայից դուրս բերեինք, եւ եւս մեկ ամիս՝ հիդրոֆոբ նյութերով մշակելու վրա, որոնք թափանցիկ նյութեր են, քարի որակն ու տեսքը չեն փոխում: Հիմա մենք ծախսել ենք եւ հավելագրել ենք նախագծով հինգ անգամ ավելի մեծ գումար, քան պետք էր այստեղ ծախսել: Դա ժողովրդի գումարներն են, որը ծախսելու կարիքը չկար: Մենք ավելի քիչ ժամանակ, ավելի քիչ գումար, ավելի քիչ մարդկանց ներգրավելով՝ կունենայինք ամառային ամիսներին լավ վերականգնված Եղեռնի հուշարձան: Հիմա սկսվում է անձրեւային սեզոնը, հուշարձանի վերեւը բաց է, ջրերը ներթափանցելու են հիմքի մեջ, որովհետեւ աստիճանները, որոնք որ պոկված են, պոկված են հիմքերից, ամբողջը խոնավանալու է, ոնց են չորացնելու: Զմեռը գործ չի կարելի անել, կամ շտապ պետք է վերեւը ձեւավորել ժամանակավոր տանիք, որ պաշտպանենք այս ապամոնտաժված մույթերը: Դա հենց այնպես բետոն չէ: Սա բռի, կոպիտ ձեւով քարը պոկած բետոն է, եւ թեք երկաթբետոնը մենք բաց ենք թողնում անձրեւների տակ»,- ասել էր նա:

Նորոգման մեկնարկից 5 ամիս անց **Անահիտ Թարխանյանը** «Հրապարակի» հետ զրույցում ասում է, որ իր միջամտությունից եւ հայտարարություններից հետո որոշակի քայլեր են արվել, որպեսզի հուշակոթողը նորոգվի համեմատաբար բարձր մակարդակով. «Ես բազմիցս խոսել եմ հուշարձանի մասին, բացերի մասին: Տասն օր է՝ չեմ գնացել այնտեղ, 10 օր առաջվա դրությամբ դեռ մեջտեղի մույթերի վրա էին աշխատում, բարձր որակի քարեր էին բերել՝ նախորդի համեմատ, թեպետ էլի այն քարերը չէին, «աբլիցովկա» էին, որոնք չեն կարող համարվել պատմական, մշակութային քարեր, սակայն, ամեն դեպքում, որակը լավն էր, նախորդ անգամվա իրավիճակից հետո ահագին բան է փոխվել, ես իմ ելույթներով նպաստեցի դրան, որ լավանա թե՛ կոնստրուկտիվ մասը, թե՛ քարերի որակը: Մտահոգություն ունեմ՝ կապված ջրամեկուսացման հարցերի հետ, կուզենայի, որ այդ հարցը եւս լուծվեր, ինչը մինչ այս պահը լուծված չէ: Անձրեւային ջրերի ջրահեռացման հարցը մնում է առկա, ինձ դեռեւս չեն համոզում այն լուծումները, որոնք առաջարկվում են: Ասեմ, որ անձրեւաջրերը երբեք չեն լցվել հուշակոթողի տարածք, ես չգիտեմ, թե ով եւ ինչպես է եկել այդ եզրահանգմանը, ինչի արդյունքում արվել է ջրամեկուսացման աշխատանք, որի համար ահագին գումար է ծախսվել եւ չարչարանք: Այդքանից հետո, այո, ինձ չի բավարարում այն աշխատանքը, որն արվել է: Վաղը ես կգնամ Ծիծեռնակաբերդ եւ կտեսնեմ, թե ինչ վիճակում է շինարարությունը, ինչպես է այն առաջ գնում, որպեսզի հասկանամ, թե ինչ վիճակում են ինձ մտահոգող հարցերը: Ամեն դեպքում լավ է, որ դեռեւս 3 մույթերն են նորոգում, մյուս 3-ը թողնում են արդեն մյուս տարվա համար, վստահ եմ, որ մյուս 3 մույթերի նկատմամբ կլինի լրիվ այլ վերաբերմունք, այս վերաբերմունքն այլեւս չի կրկնվի: Բոլոր դեպքերում, մենք ունենք պայմանավորվածություն, որ նոր նախագծային խմբում ես էլ եմ ներառված լինելու, որպես Արթուր Թարխանյանի օրինական ժառանգ, ես նաեւ իմ հոր թողած գործերի օրինական ժառանգն եմ եւ լինելու եմ հետեւողական»:

Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը սարերի ետեւում չէ, վերանորոգման աշխատանքները մինչեւ ապրիլի 24-ը կավարտվե՞ն: «Այսօր մարտի 3-ն է, պետք է ապրիլի 3-ին հիմնական աշխատանքներն ավարտված լինեն: Օրերը տաքանում են, եւ կարող են ավելի արագորեն աշխատանքը կատարել: Զմռանը, հասկանալի է, որ ցուրտ էր, եւ, եղանակով պայմանավորված, որոշակի աշխատանքներ դանդաղել են, սակայն մինչեւ 1 ամիսը՝ հիմնական աշխատանքը պետք է ավարտված լինի, այնտեղ կմնա միայն աստիճանների փոքր հատվածը, դա էլ կարվի մինչեւ ամսի 24-ը»,- ասաց մեր զրուցակիցը: Նրա խոսքով՝ բոլորովին անհրաժեշտ չէր հուշահամալիրը նորոգել եւ հավելյալ խնդիրներ առաջացնել. «Իմ կարծիքով՝ չկար նման անհրաժեշտություն, դրա կարիքն ուղղակի չկար: Այս ամենը սխալ, ոչ պատշաճ «դիագնոստիկայի» հետեւանքն էր, այդքան բան»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏԸ ԵՎ ԿՈՒՍԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՍԽԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵՑԻՆ

Դամկետային զինծառայություն չանցած, 1990-ականների ազատամարտին, ապրիլյան պատերազմին չմասնակցած, սակայն 2016-ի մայիսին առաջնագծից 35 կմ հեռավորությամբ խրամատ փորելու մեկնած եւ դրա համար պաշտպանության նախարարության շնորհակալագրին արժանացած Նիկոլ Փաշինյանը մինչեւ 44-օրյա պատերազմը ուղիղ եթերում մուննաթ էր գալիս նրանց վրա, ովքեր կասկածում էին իր հրամանատարական ունակություններին: Իսկ պատերազմից հետո նա փորձեց արդարանալ, թե վարչապետը մարտ վարող է: Պարզ չէ՝ Փաշինյանը գերագույն գլխավոր հրամանատա՞ր է, հեծանվո՞ւրդ, քաղաքացիներին Կիրանցի պատի մոտ ուղեկցող զբոսավա՞ր, ավտոբուսում նախարարների հետ հարցազրույց վարող լրագրո՞ղ, ոչ շնորհալի բանաստեղծ, նորահայտ թմբուկահա՞ր, թե՞ լիազորությունների ու արտոնությունների մեծ ծավալով բռնապետ-վարչապետ:

Ինչպես երեւում է Փաշինյանի ֆեյսբուքյան էջի տեսանյութից՝ մարտի 1-ին ՔՊ-ի առաջնորդը Դիլիջանում իջնում է ուրախ ավտոբուսից, ձնագնդիկներ սարքում, նետում իրեն տեսագրող օպերատորի վրա, դիլիջանցի մանուկներին է ձնագնդիկ խաղալու նուրբ արվեստը բացատրում: Հետո իր դասընկեր, քավոր՝ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցնում է Դիլիջանի Գետափնյա փողոցի վերանորոգման մասին: Իմանում է, որ այդ փողոցի ասֆալտի առաջին շերտը փռել են: Հետո էլի քավոր մարզպետին ինչ-որ հարց է տալիս՝ փողոցի հետ կապված ուրիշ խնդիր կա՞: Մարզպետն ասում է՝ ոչ: Դրանից հետո Փաշինյանը հիշում է, որ այդ փողոցն իր մանկության հետ է կապված, երբ այն ժամանակ այցելում էր Դիլիջան:

Իսկ մարզպետը եւ Դիլիջանի համայնքապետը Գետափնյա փողոցի նորոգման մասին ճշմարտությունը չհայտնեցին վարչապետին, ապատեղեկացրին նրան: Այդ փողոցի նորոգման հետ կապված բազում խնդիրներ կան: Նախ՝ սուբվենցիոն, մոտ 874 միլիոն դրամ արժեքով ծրագրի ժամկետն են խախտել: Դեռ փետրվարի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում էի արել Դիլիջանի Գետափնյա փողոցի կառուցապատման, ասֆալտապատման, փողոցի հարակից մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքի, ծրագրի մեկնարկի, ավարտի ժամկետների ու այն մասին, թե ծրագրի նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ որքան շեղումներ կան: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատում եւ մայթերի վերանորոգում սուբվենցիոն ծրագիրը ՀՀ համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել այն պայմանով, որ նախատեսված աշխատանքների 50 տոկոսի մեկնարկը կտրվի 2024 թվականին, մյուս 50 տոկոսինը՝ 2025 թվականին: ՀՀ կառավարության 12.02.2026 թ. թիվ 142-Ա որոշման համաձայն՝ նշված ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2027 թ. հունիսի 30-ը»: Մարզպետը չի պատասխանել այն հարցերին, թե որքան է Դիլիջանի Գետափնյա փողոցի ասֆալտապատման, մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքը, երբ է եղել ծրագրի սկիզբը, ծրագրի նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ որքան տարբերություններ կան:

Իրականում, Գետափնյա փողոցի ծրագիրն իրականացվել է նախագծից շատ մեծ շեղումներով, որի մասին ես մեծ հոդված եմ գրել: Նախկինում հրապարակում եմ արել նաեւ այն մասին, որ ՄԱԿ-ի էներգախնայողության ծրագրով Գետափնյա փողոցի բազմահարկ շենքերի արտաքին ջերմամեկուսացումն անորակ է արվել, որոշ շենքերի պատերից ջերմամեկուսացման շերտը թափվել է: Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը, փոխանակ ժամանակին վերահսկեր, որ այդ աշխատանքները որակով կատարվեին, մարտի 1-ին էներգախնայողության այդ ծրագրով հիացած Փաշինյանին զեկուցեց, որ շենքերի ջերմամեկուսացման գործն արած շինարարական կազմակերպության հետ պայմանագիրը խզել են եւ այդ կազմակերպությունը մտցել սեւ ցուցակ, պայմանագրով նախատեսվածից 20 միլիոն դրամ չեն վճարել: Նիկոլ Փաշինյանին չհետաքրքրեցին Գետափնյա փողոցի կառուցապատման ծրագրի մանրամասները, ծրագրի արժեքը, ծրագրի ավարտը: Նա երեւի չէր էլ հիշում, որ կառավարության 2026 թ. փետրվարի 12-ի թիվ 142-Ա որոշման համաձայն՝ նշված ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2027թ. հունիսի 30-ը: Փաշինյանը ձեռքով բարեւեց դիլիջանցիներին, հարցրեց նրանց հալը, հիացավ բազմահարկ շենքերում դրված նոր վերելակներով, դրանց երաժշտությամբ, կիրակի օրով թակեց նրանց դռները, մտավ նրանց տները: Վարչապե՞տ է, թե՞ շոումեն: Պարզ է, որ շոուն պետք է շարունակվի, որովհետեւ առջեւում ԱԺ ընտրություններ են:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԶՐՈՒՑ

Թերեւս սկսեմ խոստովանությունից: Մեղքս ինչ թաքցնեմ, ես միշտ մտածել եմ, որ սրանք «Քովիդ-19»-ի գործը տակով են անելու, ծածկադմփոց ու գցելու են արխիվ: Եվ, ուրեմն, պատկերացրեք իմ ուրախությունը, երբ իմացա, որ այն օրերի առողջապահության փոխնախարար Անահիտ Ավանեսյանին հրավիրել են հակակոռուպցիոն դատարան՝ այդ գործով քրեական վարույթի շրջանակներում ցուցմունք տալու: Մի խոսքով՝ ուրախ եմ: Ուրախ եմ ոչ այն պատճառով, որ Անահիտ Ավանեսյանը, էս է, այնպիսի ցուցմունքներ է տալու, որ բանը հասնի ամենավերին «դիվան Փաշուն», այլ՝ այն, որ «գործը» կա, քննվում է, եւ հալբաթ մի օր մենք դեմքով կճանաչենք մեր ժողովրդի՝ այդ խաղաղ օրերի դահիճներին:

Գործը քրեական է, չէ՞: Այսինքն, մեջտեղում քրեական հանցագործներ կան, այսինքն՝ փրկագնով ու տնային կալանքով ոչ ոք չի պլստալու, չէ՞, մոտ 9 հազար մարդ է զոհվել, ու վաղեմության ժամկետի մասին խոսելն ապուշություն կլինի, չէ՞… Ահա եւ սպասում եմ՝ մեղավորների դեմքերը տեսնելու եւ երեսներին թքելու հույսով: Ախր, սրանք ավելի վատն են, քան 44-օրյա պատերազմի պատասխանատուներն ու մեղավորները: Սրանք ուրիշ «ֆրուկտ» են, սրանց ես գիտեմ ամերիկյան «ուժս» կինոներից, որտեղ զանազան հնարքներով ու դեղերով դանդաղ սպանում են անմեղ մարդկանց: Սրանք պիտի փտեն բանտում եւ աղերսեն, որ մի օր շուտ վերջ տրվի իրենց տանջանքներին:

Տիկին Ավանեսյան, ինչ էիք զգում հակակոռուպցիոն դատարան գնալու ճանապարհին: Հանգի՞ստ էիք… Բա ինչո՞ւ վարորդին չկարգադրեցիք՝ մի հատ «պեռաշկի» առնի, որ ուտելով գնայիք… Ծամելով, գլխով նշան անելով, որ լավն է, համով է… Բայց նեղվելու բան չկա, տիկին Ավանեսյան: Ոչ ոք հակակոռուպցիոն դատարան բարձր տրամադրությամբ չի գնում: Փլավ հո չե՞ն բաժանում այդ դատարանում: Պետք է քեզ զգոն ու ձիգ պահես, ավելորդ բաներ չխոսես: Դա էլ հո բյուջեի քննարկում չէ՞, որ ճտպտաս ու թվեր կրակես: Ցուցմունք տալիս պետք է առնվազն այդ թվերին տիրապետես, պետք է անգիր իմանաս, թե քովիդի օրերին ով առաջինը նկատեց, որ «հոտին անտեր ոչխար է խառնվել», ով ասաց՝ մորթենք, ով ոտքերը բռնեց, ով մորթեց, ովքեր «կերան»: Այս մախինացիաները, տիկին Ավանեսյան, մոտ 9 հազար մարդու կյանք են արժեցել:

Հայկական կինոներում ֆրազներ կան, որոնք երբեք չեն ծերանում ու ամեն առիթով գործածվում են՝ սկսած դատարանից եւ վերջացրած վարչապետի խոսույթով: Ձեզ, տիկին Ավանեսյան, հնարավոր է նաեւ հարցնեն՝ «ո՞ւմ հետ էիր շաշկի խաղում քովիդի օրերին»: Խորհուրդ կտայի պարտիզանություն չանել եւ խոսել, որովհետեւ այս հարցի պատասխանը ոչ միայն քրեական վարույթի նախաձեռնողներն ունեն, այլեւ՝ ողջ ժողովուրդը: Ո՞վ բերեց քովիդը, ո՞վ ասաց՝ արաղով բուժենք, ո՞վ ասաց՝ սա սովորական գրիպ է, ո՞վ էր այդ օրերին սահմանադրական հանրաքվեի քարոզարշավ անում: Մի խոսքով՝ շաշկի խաղացողները մեկը կամ երկուսը չեն եղել… Վարչապետ, առողջապահության նախարար, Հայաստանի պարետ, «դիմակահանդեսի» կազմակերպիչներ, թեստավորման կենտրոնների ղեկավարներ, քովիդի քարտեզ հորինողներ եւ անգամ փողոցներում քաղաքացիներին տուգանող ոստիկաններ: Սրանց մի մասին Դուք եք ճանաչում, տիկին Ավանեսյան, մյուս մասին՝ այն օրերի Ձեր անմիջական ղեկավարը՝ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը, որին, ի դեպ, նույնպես հրավիրել են հակակոռուպցիոն դատարան՝ ցուցմունք տալու: Դրա համար էլ եմ ուրախ:

Թերթերը գրել էին, որ Անահիտ Ավանեսյանը դատարանից 2 անգամ ծանուցում է ստացել, սակայն զբաղվածության պատճառով չի ներկայացել: Ի վերջո, օրերս ներկայացել է եւ ցուցմունք տվել: Թե ինչ բովանդակություն են ունեցել ցուցմունքները, եւ ինչ զարգացումներ կարձանագրվեն գործով, առայժմ պաշտոնապես չի հաղորդվում: Հավելեմ, որ առայժմ չի հաղորդվել նաեւ, թե ինչ կարգավիճակ ունի գործող նախարարն այս գործով՝ վկայի՞, թե՞ վերադասի հանցանքները թաքցնողի:

Բանն այն է, որ Անահիտ Ավանեսյանն այս գործով ամենակարեւոր «քննվող» անձն է, պատկերացրեք՝ ավելի կարեւոր, քան Արսեն Թորոսյանն ու վերջինիս վերադասները: Ինչո՞ւ: Բացատրեմ: Հիշո՞ւմ եք, թե ինչպես Թորոսյանին ափալ-թափալ, դեռ քովիդի հաշվետվությունը չներկայացրած, ազատեցին առողջապահության նախարարի պաշտոնից ու վազեցնելով՝ բերին խորհրդարան: Սա հին ու բարի ժամանակների «տրյուկ» է, որին հաճախ են դիմում երկրի ղեկավարները, երբ գիտակցում են, որ բարձրաստիճան պաշտոնյայի «վառած կրակը» կարող է հասնել իրենց փեշերին: Արսեն Թորոսյանին, կարելի է ասել, իջեցրին ջրի հատակը, մինչեւ անցնի վտանգը: Եվ Անահիտ Ավանեսյանի «վտիտ» ուսերին մնաց նրա թողած հետքերի մաքրման դժվարին գործը: Ճիշտ է, պատգամավոր Արսեն Թորոսյանին ԱԺ-ում մի քիչ կսմթեցին, հիշեցրին, որ պետք է դեռ հաշվետվություն ներկայացնի, բայց ավելի առաջ չգնացին: Պատգամավորի պաշտոնում Թորոսյանն իրեն պահեց իսկական «մարտիկի» պես՝ հրաձգություններին պատասխանելով սպառնալիքներով, թե բոլորին եւ հատկապես պարետ Ավինյանի հետ փոխկապակցված մարդկանց ջրի երես կհանի:

«ՔՈՎԻԴ-19»-Ի ԳՈՐԾԸ ԿՀԱՍՆԻ՞ ԴԱՏԱՐԱՆ

Հետո տիրեց մի երկար ու անհարմար լռություն, մինչեւ նրան նշանակեցին սոցիալական հարցերի (թոշակների) նախարար: Թվում էր՝ վերջ, գործը փակեցին, գնաց: Բայց արի ու տես, որ «Քովիդ-19»-ի գործով կա քրեական վարույթ, եւ առողջապահության ու սոցապնախարարներն են կանչվում հարցաքննության: Հրաշալի է: Կեցցեն մեր քննիչները: Ոչ ոք չի պլստալու՝ ո՛չ վարչապետը, ո՛չ պարետը, ո՛չ էլ մյուսները, որ դույզնինչ կապ են ունեցել «քովիդի դեմ պայքար» կոչված խեղկատակության հետ: Պետք է գնալ մինչեւ վերջ՝ «ըստ էության ու ամբողջությամբ» բացահայտել գործը եւ մեղավորներին կանգնեցնել դատարանի առջեւ: Սա կարեւոր է, եթե կուզեք՝ ավելի կարեւոր, քան մարտի »-ի գործը, որ այս իշխանությունների թեթեւ ձեռքով պարտակվեց ու տրվեց մոռացության: Իրենք հո իրենց չէի՞ն դատելու…

Ես ուզում եմ հավատալ, որ «Քովիդ 19»-ը սրանք չեն մարսելու: Իրենք էլ չհասցնեն քննել՝ հաջորդ իշխանությունն այդ քննությունը կհասցնի ավարտին, ու մեղավորներն իրենց պատիժը կստանան: Օգնություն պե՞տք է այս հարցում… Խնդրեմ: Դատարան հրավիրեք քովիդի դեմ պայքարում իրեն լավագույն կողմերով դրսեւորած ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին: Նա շատ բան գիտի այն օրերին Հայաստանի բարեկամ երկրներից որպես օգնություն եկած ֆինանսական միջոցների, դեղորայքի, բժշկական սարքավորումների մասին, որոնք փոշիացվել են՝ չհասնելով իսկական շահառուներին:

ՀԳ. *Արսեն Թորոսյան, ես քեզ ասե՞լ էի, որ մի օր ստիպված ես լինելու հաշվետվություն տալ: Ասել էի…*

ՀԳ 1. *Բոլորը գիտեն, որ իմ մեկ հատիկ ձայնն այս ընտրություններում ո՛չ ՔՊ-ի համար վճռորոշ կլինի, ո՛չ ընդդիմության: Տեսեք, ուրեմն, ինչ եմ ասում: Ես պատրաստ եմ իմ մեկ հատիկ ձայնը տալ թիվ 1 ամուրիին, եթե նա մինչեւ հունիսի 7-ը բացահայտի Արսեն Թորոսյան կոչվողի էությունը:*

ՀԳ 2. *44-օրյա պատերազմը բոլորովին այլ թեմա է՝ այլ պատասխանատուներով ու մեղավորներով:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԹՐԻՓ-Ի ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԿԱԽՎԱԾ Է ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

ԹՐԻՓ-ի շուրջ տեղի ունեցող զարգացումներն ուղղակիորեն կախված են Իրանում մոլեգնող պատերազմից, թե ինչպիսին է լինելու դրա ավարտը՝ կարծում է քաղաքագետ **Հակոբ Բադալյանը**: «Ըստ այդմ, հնարավոր կլինի հասկանալ, թե ինչպիսի զարգացումներ սպասել կոնկրետ Թրամփի ուղղու ճակատագրի վերաբերյալ: Եթե Իրանի վարչակազմը կարողանա պահպանել իր դիրքերը եւ պահպանել այնպես, որ շարունակի ռեգիոնալ պատկերի վերաբերյալ իր քաղաքականությունը, ապա այդտեղ մի տարբերակի հետ գործ կունենանք: Եթե Իրանում պահպանվի վարչակարգը, բայց գործնականում տեղի ունենա քաղաքականության էական մեղմացում, ապա այդ դեպքում այլ տարբերակ կունենանք եւ, բնականաբար, լրիվ այլ պատկեր, եթե Իրանում լինի կառավարման համակարգի եւ կայունության փլուզում: Այսինքն, բոլոր դեպքերում կախված է այն բանից, թե ինչպես կավարտվի այդ պատերազմը»,- նկատեց Բադալյանը:

Մեր հարցին, որ եթե ԹՐԻՓ-ն արդեն կյանքի կոչված լիներ, այդ դեպքում Հայաստանն էլ կլիներ թիրախներից մեկը, քաղաքագետը դժվարացավ պատասխանել, քանի որ ամեն ինչ կախված կլիներ այն բանից, թե կյանքի կոչված լինելու պարագայում ԹՐԻՓ-ը որքանով կսպառնար Իրանին, եւ, ըստ այդմ, որքանով հրատապ կլիներ այդտեղ ինչ-որ բան վերացնելը, ոչնչացնելը: «Ինքնին, ամերիկյան ենթակառուցվածքներ կան, օրինակ, Թուրքիայում կան իսրայելական հենակետեր, օրինակ՝ Ադրբեջանում, ավելին, դա հանրահայտ ճշմարտություն է, եւ Իրանը նույնիսկ 12-օրյա պատերազմից հետո բաց տեքստով Ադրբեջանի հետ խոսեց այդ մասին: Բայց մենք տեսնում ենք, որ այնպես չէ, թե միարժեք ինչ-որ ներկայություն կամ առկայություն Իրանի համար թիրախ է դառնում: Սա շատ էական է, եւ, հետեւաբար, այդպես միարժեք ասել, թե ԹՐԻՓ-ն իրականություն լինելու դեպքում կդառնար Իրանի համար հարվածի ուղղություն, ես չէի ասի: Դա կախված կլիներ, թե ԹՐԻՓ-ը որքան կծառայեր Իրանի դեմ ամերիկյան եւ իսրայելական պատերազմի անմիջական խնդիրներ կամ նպատակներ լուծելուն»,- նկատեց քաղաքագետը:

Իրանն ինքնանպատակ չի հարվածում բոլոր այն ուղղություններին, որտեղ կա ամերիկյան ներկայություն՝ շեշտում է Բադալյանն ու հավելում, որ Ծոցի երկրներին ուղղված Իրանի այդ հարվածները թիրախային են եւ միտված են այն բոլոր տեղերին, որտեղից անմիջականորեն ինչ-որ մասնակցություն է լինում Իրանի դեմ ընթացող պատերազմին՝ հարվածների կազմակերպում, համակարգում եւ այլն, եւ այլն: «Եթե Իրանում կառավարումը կազմալուծվի, ապա դա կբերի անկայունության եւ գործնականում՝ անխուսափելի քաոսի: Գլխավոր խնդիրը, իմ գնահատմամբ, կառավարման ներկայիս համակարգը կազմալուծելն է եւ Իրանը՝ որպես քաղաքական սուբյեկտ, որպես քաղաքական միավոր, այսպես ասած, մեջտեղից դուրս բերելը: Իրանը չի ուզում ենթարկվել ամերիկյան եւ իսրայելական քաղաքական պատկերացումներին, փորձում է լինել ինքնուրույն խաղացող՝ մի ռեգիոնում, որտեղ Միացյալ Նահանգները, ռազմավարական իմաստով, մեծ խաղադրույք է կատարում, եւ առավել եւս, երբ կա արդեն Իրանի՝ Չինաստանի եւ Ռուսաստանի հետ հարաբերության խնդիրը, որը չի ենթարկվում ամերիկյան քաղաքական պատկերացումներին: Իմ գնահատմամբ, խնդիր է դրված՝ լուծել այս հարցը»,- ասաց Բադալյանը: Իսկ դրանից հետո Իրանում կայունություն կլինի, թե ոչ, քաղաքագետի կարծիքով, ԱՄՆ-ին կամ Իսրայելին այդքան էլ չի հետաքրքրում:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԻՐԱՆ

ՊԱՐԶՎՈՒՄ Է՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀԸ ԿԱՐՈՂ Է ՊԱԿԱՍ ՑԱՎԱԼԻ ԼԻՆԵԼ, ԵԹԵ ՆՐԱՆՔ ՀԱԿԱՌԱԿ ճԱՄԲԱՐԻՑ ԵՆ

Ամերիկա-իսրայելական համատեղ հարձակումից հետո Իրանը թիրախավորեց ու սկսեց հարվածներ հասցնել արաբական երկրներում տեղակայված ամերիկյան ռազմաբազաներին: Թիրախում հայտնվեցին Սաուդյան Արաբիան, Հորդանանը, Օմանը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Բահրեյնը, Քուվեյթը: Ընդ որում,

արեւմտյան քարոզչությունը ներկայացնում էր, թե իրանական կողմը պարզապես որոշել է իր զայրույթը կոտրել արաբական երկրների վրա, այնինչ ամեն ինչ այդքան էլ միանշանակ չէ:

Իրանը նախապես հայտարարել էր, որ հնարավորություն չունի անմիջապես ԱՄՆ տարածքին հարվածելու, հետեւաբար, իր վրա հարձակման պարագայում թիրախում կհայտնվեն ամերիկյան այն ռազմաբազաները, որոնք տեղակայված են Մերձավոր Արեւելքում: Հենց այդ հանգամանքը ստիպել էր Օմանին, Սաուդյան Արաբիայի ու Քուվեյթի առաջնորդներին՝ կոչ անել ԱՄՆ-ին՝ համաձայնության գալ Իրանի հետ բանակցությունների սեղանի շուրջ: Սակայն ԱՄՆ-ն ու Իսրայելը հարվածեցին Իրանին՝ այն դեպքում, երբ բանակցությունները տվել էին դրական արդյունք, որպեսզի հետո հայտարարեին, որ հարվածել են Իրանին՝ տարածաշրջանում իրենց բազաներին ու բարեկամ պետություններին սպառնացող վտանգը չեզոքացնելու համար: Իսկապե՞ս այդքան մտահոգված է ԱՄՆ-ն արաբական բարեկամ պետություններով. վիճելի հարց է, եթե նկատի ունենանք միջազգային մամուլի այն տեղեկությունները, որ ԱՄՆ-ն իր լրջագույն զենքերն ու ՀՕՊ համակարգերը սկսել է հանել արաբական երկրներից ու դրանք տեղափոխել Իսրայել՝ իր դաշնակից պետության անվտանգությունն ավելի արդյունավետ կառուցելու համար:

Եվ ի՞նչ է ստացվում. արաբական երկրները, որոնք համաձայնել էին դառնալ ամերիկա-իսրայելական պատերազմի պլացդարմ Իրանի դեմ կամ պարզապես շանս չէին ունեցել ԱՄՆ-ին մերժելու, դարձել են հրթիռակոծության թիրախ: Ընդ որում, խոսքը միայն նյութական վնասների մասին չէ, այլեւ՝ կետային հարվածների: Օգտատերերը տարածում են տեսանյութեր, որ Իրանը հարվածել է Դուբայում ինչ-որ շքեղ հյուրանոցի, այնինչ ռազմածովային ուժերի հետախուզության նախկին սպա Սքոթ Ռիտտերն ասում է՝ այդ հյուրանոցին հարվածելը պատահական չի եղել, այնտեղ տեղակայվել էին ամերիկյան ԿՀՎ-ի առանցքային դեմքեր ու պաշտոնյաներ: Հետաքրքիր է, որ ռազմական փորձագետներն Իրանի գործողություններում որոշակի նորարարություններ են նկատել, որոնք չեն եղել 12-օրյա պատերազմի ժամանակ: Օրինակ, Իրանը կոնկրետ թիրախային հարվածներ է հասցնում ամերիկյան այն ենթակառուցվածքներին ու օբյեկտներին, որոնց աշխատանքի բովանդակությունն ու նշանակությունը բարձր են: Երկրորդ. Իրանը փակեց Հորմուզի նեղուցը, որը նավթի գների սարսափելի աճի կբերի ամբողջ աշխարհում ու նույն ԱՄՆ-ում կարող է հասարակական լայն դժգոհությունների առաջացման պատճառ դառնալ: Միեւնույն ժամանակ, Իրանը հարվածում է արաբական երկրների նավթամշակման կետերին ու բունկերներին՝ փաստացի, նավթով ապրող այդ երկրների շնչառությունը կանգնեցնելով որոշակի ժամանակով, այսինքն, հարվածում է երկրի տնտեսությանը:

Մեկ այլ հետաքրքիր ֆենոմեն էլ դրսեւորվեց. պարզվեց, որ Իրանի վրա հարձակումը մի շարք երկրներում լրիվ այլ հակազդեցություն է առաջացրել: Օրինակ, Պակիստանում մարդիկ հավաքվել ու հարձակվել են ամերիկյան դեսպանատան վրա, ի աջակցություն Իրանի՝ Եմենում եւ Բահրեյնում են որոշակի զարգացումներ տեղի ունեցել: Ու որքան էլ զարմանալի թվա, ի վերջո, ԱՄՆ-ն էլ բավականին վնասներ է կրել, չնայած դա դեռեւս չի երեւում հեգեմոնի վրա: Ուշագրավ է նաեւ այն, որ 4 տասնամյակ ծայրահեղ ծանր սահմանափակումների տակ գտնվող Իրանը կարողացել է ստեղծել գերձայնային հրթիռներ, որոնք եւս մեկ անգամ կոտրեցին, այսպես կոչված, «Երկաթյա գմբեթի» միֆը:

Իսկ ի՞նչ են փորձում անել ԱՄՆ-ն ու Իսրայելը. իհարկե, մենք չենք կարող իմանալ այս երկու պետությունների իրական նպատակների մասին, սակայն Խամենեիի մահը, աղջիկների դպրոցը հրթիռակոծելն ու արդյունքում մոտ 170 երեխայի սպանությունը, Իրանում քաղաքացիական օբյեկտների հրթիռակոծումը, ինչպես մի շարք փորձագետներ են նշում, նպատակ ունեն մարդկանց շրջանում քաոս սերմանել ու Իրանն ընկղմել կառավարելի քաոսի մեջ, որտեղ մարդիկ գրոհում ու գրավում են կառավարական, իշխանական օբյեկտները: Սա վտանգավոր սցենար է թե՛ Իրանի, թե՛ նրա հարեւան երկրների համար, ինչը կարող է հետագայում տանել Իրանի մասնատման, իսկ մեր տարածաշրջանի դառը փորձը ցույց է տվել, որ մասնատումից հետո ողջ տարածաշրջանը խեղդվում է անվերջանալի ռազմական բախումների, հակահաբեկչական խմբավորումների ու արյունահեղության մեջ: Իհարկե, դեռ վաղ է խոսել այն մասին, թե ով պարտվեց կամ ով հաղթեց պատերազմում, սակայն մի բան հստակ է. այս պատերազմում սպանվում են նաեւ երեխաներ, ու պարզվում է, որ երեխաների մահն էլ կարող է պակաս ցավալի լինել, հատկապես՝ եթե նրանք հակառակ ճամբարից են:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՀՀ-ՈՒՄ ԱՐԳԵԼՎԱԾ ՉԷ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ ԹՈՇԱԿ ԲԱՐՁՐԱՑՆԵԼԸ, ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ՝ ԱՐԳԵԼՎԱԾ Է

«Դրապարակի» զրուցակիցն «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ համակարգող **Դանիել Իոաննիսյանն** է:

- Թեպետ նախընտրական քարոզարշավի մեկնարկը դեռեւս տրված չէ, եւ խորհրդարանական ընտրություններին դեռ մոտ 4 ամիս ժամանակ կա, սակայն գրեթե բոլոր ուժերը, հատկապես՝ իշխանությունները, արդեն սկսել են նախընտրական քարոզարշավը. տարբեր խոստումներ են տալիս, թոշակներն են բարձրացնում, ասում են, որ 70 միլիոն եվրոյի վարկ են վերցնելու, որպեսզի ջրամատակարարման հարցերը լուծեն, չնայած դրանով պետք է «Վեոլիա ջուր»-ը զբաղվի եւ այլն, եւ այլն: Հասարակության մի ստվար զանգված այս քայլերում նախընտրական կաշառքի տարրեր է տեսնում: Դուք ընտրությունների դիտորդության փորձ ունեք, ի՞նչ կարծիքի եք այս առումով:

- Նախընտրական քարոզարշավի մեկնարկն օրենքով սահմանված է սկսել ընտրություններից մի քանի շաբաթ առաջ՝ այս պարագայում մայիսի կեսերին, սակայն կուսակցությունները, բնականաբար, քարոզարշավը շատ շուտ են սկսում, մեծ հաշվով՝ անգամ տարիներ առաջ են սկսում: Գնալով ավելի ակտիվանում է պրոցեսը, վերջին մեկ ամսում պարզապես խիստ կանոնակարգվում է ամեն բան, բայց, ընդհանուր առմամբ, քարոզարշավը սկսվում է շուտ: Վերջին մեկ ամսում անվճար հեռուստաթեթեր է տրամադրվում, մի ժամանակ միայն Հ1-ով էր, հիմա դարձրինք բոլոր TV-ներով: Անվճար դահլիճներ, հանդիպումներ եւ այլն: Ինչ վերաբերում է ընտրակաշառքին, ապա այս պահին մենք ունենք նախապատրաստվող ընտրակաշառքի հետ կապված ինչ-որ ինֆորմացիաներ, սակայն դեռեւս ոչինչ հստակ չէ: Ինչ վերաբերում է թոշակների բարձրացմանը, ապա Հայաստանում օրենսգրքով արգելված է ընտրություններից առաջ թոշակ բարձրացնելը, օրինակ՝ Բրիտանիայում այն արգելված է: Քանի որ Հայաստանում արգելված չէ, իշխանությունն էլ օգտագործում է դա:

- Իսկ չե՞ք տեսնում, որ այստեղ կան ընտրակաշառքի տարրեր:

- Չէ, իհարկե, եկեք մի բան հասկանանք՝ կան ընդդիմադիր ուժեր, ովքեր ասում են՝ գալու ենք թոշակները բարձրացնելու, ՔՊ-ն իշխանություն է, եւ ինքն է թոշակները բարձրացնում, եթե բացեք Քրեական օրենսգիրքը՝ ընտրակաշառքի հոդվածը, ապա այնտեղ որեւիցե բան խոստանալն ու անելը հավասարեցված արարքներ են համարվում: Ես ձեզ տամ 100 հազար դրամ եւ ասեմ՝ ինձ ընտրեք, կամ ասեմ՝ ինձ ընտրեք, 100 հազար դրամ կտամ, լրիվ նույն արարքն է, ըստ օրենքի: Հիմա ընդդիմությունը խոստանում է բարձրացնել թոշակները, իշխանությունը բարձրացնում է այն, եթե թոշակ բարձրացնելն ընտրակաշառք է, ապա թոշակի բարձրացման խոստումը եւս ընտրակաշառք է, բայց ո՛չ այն է ընտրակաշառք, ո՛չ էլ՝ այն: Ընտրակաշառքը ենթադրում է, որ ինչ-որ բան տալիս է մարդուն՝ ինչ-որ բանի դիմաց: Հիմա հո բոլոր թոշակառուները չե՞ն գնացել ստորագրել, որ Փաշինյանին են ընտրելու:

- Այդ դեպքում ինչո՞ւ 1-2 տարի առաջ չէին բարձրացնում նույն թոշակները, ավելին՝ հայտարարում էին, որ թոշակառուն ծախսելու տեղ չունի.... անզեն աչքով երեւում է, թե ինչ նպատակով է արվում:

- Իհարկե, նպատակն ընտրություններում հաղթելն է: Պարզ է, որ հիմա են անում, որպեսզի ընտրություններում առավելություններ ունենան:

- Նշեցիք, որ ինֆորմացիա ունեք, թե ընտրակաշառք են պատրաստվում տալ, ովքե՞ր, խոսքը ո՞ր ուժի կամ ուժերի մասին է:

- Մենք ունենք ինֆորմացիա, որ կան ուժեր, ովքեր քննարկում են այդ հարցը, սակայն, քանի դեռ այն հաստատ չէ, մենք չենք կարող խոսել այդ մասին, դեռեւս ձեռքիս չկան փաստեր:

- Իսկ ինչպե՞ս եք նման տեղեկություններ ստանում՝ իրավապահների՞ց, թե՞ այլ աղբյուրներից:

- Իրավապահները ոչինչ չեն ասում ինձ, մենք դաշտում ենք եւ ինֆորմացիա հավաքելու հնարավորություններ ունենք:

- Բոլոր ժամանակներում էլ իշխանություններն ունեն մեծ առավելություններ, քան ընդդիմադիրները, այսքան վարչական ռեսուրս կիրառող իշխանությունը որեւէ հակաօրինական քայլ չի՞ անում:

- Մի փոքր կառարկեմ. իշխանությունները թեպետ ունեն առավելություններ՝ վարչական ռեսուրսով պայմանավորված, սակայն ունեն նաեւ սահմանափակումներ՝ խոստումների հետ կապված: Եթե ընդդիմադիրը կարող է խոստանալ, որ սարեր շուռ կտա, իշխանությունը դա չի կարող:

- Բայց Փաշինյանը հենց սարեր շուռ տալու խոստումներով եկավ իշխանության:

- Դե, նա այն ժամանակ ընդդիմադիր էր: Նա էլ շատ բան էր խոստացել եւ չարեց: Իշխանությունները միշտ էլ, ի տարբերություն ընդդիմադիրների, ունեն սխալներ, որոնց համար իրենց, կոպիտ ասած, հասարակությունը ենթարկում է պատասխանատվության: Ընդդիմությունը մի փոքր այլ է այս առումով, թեպետ Հայաստանի ընդդիմությունը մեծ մասամբ նախկին իշխանություններից է կազմված: Ինչ վերաբերում է իշխանությունների կողմից վարչական ռեսուրսների չարաշահմանը, ապա, այո, Վաղարշապատի ընտրություններում մենք դա տեսել ենք:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՇՐՈՒՅՑ

Ո՞Վ ՄԵՐ ԱԶՆՎԱԶԱՐՄ ԱԶԳԻՆ ՎԱՐԺԵՑՐԵՑ ՊՂՏՈՐ ՋՈՒՐ ԽՄԵԼՈՒՆ

Զրող **Մերուժան Տեր-Գուլանյանի** հետ զրուցել ենք՝ անդրադառնալով մեզ պարտադրված ժամանակի խնդիրներին, որը երբեմն փակուղի է թվում, բայց որից միշտ ելք կա:

- Մեր զրույցն սկսեմ հռետորական հարցով. ի՞նչ ժամանակներում ենք ապրում:

- Տպավորություն ունեմ, որ ժամանակից դուրս ենք ապրում մենք: Ինչքան էլ տարօրինակ է, մեր շուրջբոլորը կրակ է վառվում, մենք դա չենք տեսնում: Մենք ղեկավարվում ենք ինչ-որ մարդկանց կողմից, որոնք ո՛չ ժամանակն են զգում, ո՛չ տարածությունն են զգում, ո՛չ շրջապատն են զգում: Մենք ժամանակից դուրս ենք ապրում, մենք դուրս ենք ընկել ժամանակից: Սայթաքել ու դուրս ենք ընկել ժամանակից: Ո՞վ հրեց մեզ: Ո՞վ հրեց այս հրաշալի ազգին, որ դուրս ընկնի ժամանակից: Այս ժամանակը մերը չէ: Մենք պետք է վերադառնանք մեր ժամանակին: Ոչ թե ուրիշի թելադրած ժամանակի մեջ ապրենք, այլ՝ մեր թելադրած ժամանակի:

- Ունեինք երկու հայկական հանրապետություն՝ Հայաստանի եւ Արցախի հանրապետությունները: Վերջինս թեպետ չճանաչված, սակայն իր բոլոր գործառույթներով լիարժեք հանրապետություն էր: Իսկ այսօր Արցախում գեթ մեկ հայ չի ապրում՝ անգամ որպես թանգարանային նմուշ...

- Ցավոք, գիտեմ մարդիկ, որ այս իշխանական խմբակի մտերիմներն են, քարոզիչները, ասում են՝ գիտե՞ք ինչ, մենք վաղուց էինք Արցախը տվել (իրենք Ղարաբաղ են ասում), դուք տեղյակ չէիք: Բայց առաջ ես գնում էի Արցախ: Այսօր չեմ կարող գնալ Արցախ, որն իմ հոգու հայրենիքը լինի կարծես: Եվ կար ժամանակ, որ մեր՝ բոլորիս հոգու հայրենիքն էր: Ինչպե՞ս եղավ, որ սկսեցին տակից դանդաղ, չերեւացող սեպ խրել Հայաստանի եւ Արցախի միջեւ: Եվ հաջողվեց իրենց: Հաջողվեց մեր աչքի առաջ: Մենք՝ բոլորս, մտածում էինք, որ սա ժամանակավոր է, կանցնի: Ինչպե՞ս կարող է այդպես լինել, բայց եղավ: Եվ հիմա ես սարսափով մտածում եմ, որ էլի բաներ, որոնք մենք կարծում ենք՝ հնարավոր չէ, կարող են լինել, ինչպես աշխարհի պարագայում է: Եվ հանկարծ պարզվի, որ դա արվել է արդեն, որին մենք տեղյակ չէինք: Իմ սարսափը դրա շուրջ է այսօր: Բայց, գիտե՞ս, ցեղական ձին պղտոր ջուր չի խմում. այդ ո՞վ էր, որ մեր ժողովրդին սովորեցրեց պղտոր ջուր խմելուն: Մեր ազնվացեղ ազգին, որն Աստծու դեմ մենակ է կանգնած՝ մենակ, եւ մարդկության հիշողությունն է: Այն բոլոր ժողովուրդները, որ մեզ հետ ապրում էին երկրի վրա, վերացան կամ ձեւախեղվեցին, բայց մենք մնացինք նույնը եւ մնացինք մենակ: Ու ես փնտրում եմ հավերժական հային, այն հային, որի հոգին ավելի մեծ է, քան իր մարմինը, որը, եթե գալիս է իշխանության, պետք է մոռանա իր մարմինը, ինքն ազգի մարմինը պետք է ճանաչի եւ ծառայի դրան: Հավերժական հայն այդ մարդն է, եւ ես հիմա փնտրում եմ:

- Արցախը ենթարկվեց էթնիկ զտման, ոչնչացվում է հազարամյակների հայկական մշակութային ժառանգությունը: Լուռ է աշխարհը, լուռ է ՀՀ կառավարությունը: Այս ուրացումն էր մեր վերջնագիծը, որ հատեցինք:

- Միամիտ չլինենք, աշխարհ չկա: Որ կգա եւ կպաշտպանի մեզ՝ այդ իմաստով չկա: Ամեն մեկը մեզ քաշում է իր կողմը, եւ հին գառան մորթու նման պատառոտում են այս պստիկ երկիրը: Հույսդ դնես այդ տերությունների վրա: Երբ Արցախը շրջափակված էր, ի՞նչ արեց քրիստոնյա եւ մարդու իրավունքներն ու ազատությունը թմբկահարող Եվրոպան, Արեւմուտքը. ոչ մի բան: Ոչ մեկի պետքը չէր, որ Արցախում մի ամբողջ ժողովուրդ բանտարկված է: Հույսդ կտրիր աշխարհից, մենք պիտի մեզ վրա մեր հույսը դնենք: Ամբողջ ողբերգությունն այն էր, որ մենք էլ, լուռ նստած՝ սպասում էինք, ո՞ւմ էինք սպասում: Վերջին հաշվով, կարելի էր ճեղքել ու մտնել, հանել ժողովրդին կամ թույլ չտալ, որ ժողովուրդը դուրս գա, հաց տանեինք: Բայց չարեցինք: Ո՛չ ընդդիմություն, ո՛չ դիմություն, ո՛չ քաղաքական կուսակցություններ, ոչ մեկս չարեցինք: Ժամանակին կարողացավ այդ բանն անել մի տղա՝ Հաց բերողը, մենք էլ կարող էինք, չէ՞: Իսկ եթե այդ մշակույթը ստեղծող ժողովուրդը չկա, այդ մշակույթի հետ ինչ ասես՝ կարող են անել: Ժողովուրդն իր տանը չէ, իր ստեղծած մշակույթի կողքին չէ, եւ ինչ ասես կարող է պատահել: Ի՞նչ պատահեց Արեւմտյան Հայաստանում: Թուրքիան ի՞նչ արեց. հայերը չկային, եւ ինչ ուզեց, արեց: Տաճարներ ոչնչացրեց, որոնք եղել էին կրթական ու մշակութային կենտրոններ, որոնցից հետք չի մնացել: Ինչպես մենք չենք ներում մեր պապերին՝ Արեւմտյան Հայաստանը թողնելու համար, այնպես էլ մեր թոռները մեզ չեն ներելու՝ Արցախը թողնելու համար: Մենք՝ բոլորս, մեղավոր ենք եւ պատասխան չունենք:

- Պատմության մեջ կամ խաղաղության գնալու այսպիսի գործընթաց, երբ թշնամին մեզ ֆաշիստական երկիր է համարում եւ դատում է մեր ռազմագերիներին որպես նացիստների, թե՞ այդպես է լինում կապիտուլյացիան:

- Այդպիսի նախադասությամբ պատերազմ է սկսվում, ոչ թե՝ խաղաղություն: Այսօր մենք պատերազմի մեջ ենք, բայց անտեղյակ ենք, մեզ վրա խաբար չկա՝ կոպիտ ասած: Այստեղ ժողովրդին հանդարտեցնում են, թե սահմանի վրա չեն կրակում, բայց ահռելի պատերազմի մեջ ենք: Եթե այդ նախադասությունը հնչեցնում է՝ անվանելով մեզ ֆաշիստական երկիր, նշանակում է՝ պատերազմ է հայտարարում քեզ: Չե՞ք տեսնում, որ Ալիեւի հրահրմամբ՝ երկրները մեդալներ են տալիս մեր ղեկավարությանը: Սա սահմռկեցուցիչ է: Սա տարրական բան է, որ ամեն մարդ պիտի հասկանա, եւ սա լրջագույն պատերազմ է: Այս պատերազմը, որ վարվում է մեր դեմ, ավելի վատ է, քան իրական պատերազմը, որտեղ կարող ես կանգնել եւ քո արժանապատվությունը պաշտպանել: Իսկ մենք ցույց ենք տալիս, թե խաղաղության ենք գնում:

- Ո՞ւր է տանելու «Արեւմտյան Ադրբեջան» պետականորեն հովանավորվող գործընթացը: Հայաստանը դառնալու է երկրորդ Արցամխ:

- Դրա դեմն առնելու տարրական միջոց կա: Գանձակը հայկական քաղաք էր, Կիրակոս Գանձակեցին էլ՝ վկա: Էլ չեմ ասում ամբողջ Արցախի մասին՝ Խաչենով, հայկական մելիքություններով: Այսօր ոչ ոք չի հիշում այդ մասին, ոչ ոքի պետքը չէ: Վերջերս քայլում էի փողոցներով եւ Երեւանը չճանաչեցի: Ամեն քայլափոխի սրճարաններ ու ռեստորաններ էին: Եվ ամեն տեղ՝ երկիրն այս վիճակում, կուշտ ուտում էին: Ես չեմ հիշում, որ առաջ Երեւանում այդպես ուտեին: Մարդիկ նստած զրուցում էին, եւ ուտել-խմելը նրա համար էր, որ զրուցեն: Չտեսության պես ինչ-որ բան է հայտնվել. ուտում են, ուտում են, ուտում են... Ինչպե՞ս խմեցինք մենք այդ պղտոր ջուրը եւ մեր ազնվացեղ տեսակն իջեցրինք այդ գետնաքարշ վիճակին: Ես էլ Արեւելյան Հայաստանն եմ ուզում, որ հիմա Ադրբեջան է: Արցախը՝ Գանձակով, Խաչենով եւ այլնով, որ Արեւելյան Հայաստան է: Ինչո՞ւ մեզնից ոչ մեկը, մեր պետական այրերից ոչ մեկը դա չի հնչեցնում: Գոնե ձայն հանեն, խոսքով դիմադրեն: Այսօր խորհրդարանական ընդդիմությունը լավ է զգում իրեն, որ շատ լավ հարց է տվել իշխանություններին, բայց ես տխրում եմ: Ըստ էության, ընդդիմությունն արմատական հարց չունի, իշխանություններն էլ՝ պատասխան: Չկա արմատական հարցը, որը բերում է գործողության: Ինչ-որ ներքին հավասարության պես մի բան կա, եւ ինձ տխրեցնում է դա:

- Երբեւէ հայ գործիչների կողմից Հայ եկեղեցին այսպես հալածվե՞լ է: Ինչո՞ւ հիմա, եւ ի՞նչ կա խորքում դրված:

- Հայոց եկեղեցին մեր ազգի սրբությունն է, մեր որբ, անթագավոր տարիներին մեր տերն ու թագավորն է եղել, մեզ պահողն է եղել: Բոլոր հայ թագավորները խոնարհ են եղել կաթողիկոսի առջեւ, գնացել են աջը համբուրելու: Դու պետություն չունես, եթե եկեղեցի չունես: Երբ իշխանությունը բարոյալքվում է, հարձակվում է իր սրբությունների վրա: Իսկ բարոյալքված մարդու ձին երկար չի կարող վազել: Որեւէ պարագայում երբեւէ ոչ մեկը չի կարողացել մազաչափ վնասել Հայոց եկեղեցուն: Երբ Լենկ Թեմուրը գրավեց ամբողջ Հայաստանը, իր բարբարոս զինվորներին արգելեց մտնել Էջմիածնի տաճար, ինքն էլ չմտավ: Այսօր պայքարը ոչ թե կաթողիկոսի դեմ է, այլ՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ: Խնդիր է դրված, եւ արդեն հայտնի է, թե ովքեր են այդ խնդիրը դրել. Սփյուռքն անջատել Հայաստանից: Հրաժարական պահանջել կաթողիկոսից՝ նշանակում է, որ այլեւս Ամենայն հայոց կաթողիկոս չի լինելու: Լինելու է Հայաստանի Հանրապետության կաթողիկոս: Սփյուռքն անջատվելու է. սա է ամենակարեւոր խնդիրը, եւ այս խնդիրն է դրված:

- Եթե հունիսի 8-ին Փաշինյանը մնա վարչապետ, ի՞նչ է սպասվում մեզ:

- Ես չեմ ուզում իրենց մասին խոսել ընդհանրապես: Ինձ թվում է՝ իրենց համար լավ կլինի, որ ես իրենց մասին չխոսեմ: Իսկ ինչ որ դու ինձ ասում ես՝ մնալը, անհնարին է: Իսկ իրենց մասին ես չեմ ուզում խոսել:

- Զրույցն ավարտեմ կրկին հռետորական հարցով. ի՞նչ պետք է անենք մենք:

- Փոխանակ ասեն այս մարդկանց՝ վեր կացեք, թողեք գնացեք տուն, եւ թող գան մարդիկ, որոնք կարող են անել, դուք չկարողացաք: Մենք հնարավորություն տվեցինք, իսկ դուք չկարողացաք անել: Դե, գնացեք հիմա: Փոխանակ միավորվեն քաղաքական ուժերը, կուսակցությունները եւ ասեն դա, անմիջապես հարցնում են՝ ո՞վ է լինելու վարչապետը: Ի՞նչ կապ ունի, թե ով է լինելու վարչապետը: Ամեն մեկն ուզում է լինել վարչապետ: Այդ ցավը հնուց է մեր մեջ: Չկա մեկը, որ ասի՝ ես չեմ ուզում լինել վարչապետ, բայց ես ուզում եմ վարչապետ ունենալ: Այս հավերժական ժողովուրդը՝ Աստծու դեմ մենակ կանգնած եւ Աստծու հետ խոսող ժողովուրդը, զարմանալիորեն չի կարողանում մեկ հարցում համաձայնության գալ. որ հավաքվում ենք, ընտրում ենք մեկին եւ լսում ենք իրեն: Բայց ընտրում ենք ո՞ւմ՝ ով ասելիք ունի եւ ունի ծրագիր, ով ասում է, թե վաղն ինչ է անելու, մյուս օրն ինչ է անելու: Այդպիսի մեկին պիտի ընտրել, որին ես հավերժական հայ եմ անվանում, այսինքն՝ հայ, որ հավերժից գալիս է, եւ ինքն ունի այն, որը մյուս ցանկացողները չունեն: Ով տեղից ելնում է, ուզում է վարչապետ դառնալ: Այս երկրում էլի պաշտոններ կան, ինչո՞ւ եք ուզում բոլորդ վարչապետ դառնալ: Սա ի՞նչ մղձավանջ է: Դուք դժգո՞հ եք այս իշխանություններից. ասեք՝ գնացեք տուն, դուք չկարողացաք անել, մենք կգանք-կանենք: Եվ ասեք, թե ինչ եք անելու, որ այս ժողովուրդը կողմնորոշվի:

Ովքեր ո՛չ պապ են սպանել, ո՛չ տերտեր, ովքեր իրենց ձեռքերի տխրությունը լվանալու կարիք չունեն՝ այդ ձեռքերը մաքուր են, այդ մարդկանց հետեւից պիտի գնալ այսօր: Մեր ժողովուրդը պիտի հասկանա, որ այսօր շեշտակի փոխվեց ժամանակը. հարձակվեցին երկու տերություն՝ ԱՄՆ-ն եւ Իսրայելը Իրանի վրա, ապրելու եւ մեռնելու պատերազմ է, երբ ընդամենը 3 օր առաջ խաղաղության բանակցություններ էին ընթանում: Իսկ Իրանը Հին Պարսկաստանն է եւ մեր հազարամյակների հարեւանը: Մի՞թե մենք այնքան անտարբեր ենք, որ չենք լսում պայթող ռումբերի ձայնը՝ Իրանի մեր հայրենակիցների եւ Բեյրութի մեր հայրենակիցների:

Հուսիկ Արա

ՊՈՊՈՒԼԻԶՄ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ՝ ԲՈԼՈՐ ԱՆՆԵՐԵԼԻ ՍԽԱԼՆԵՐԻ ԴԻՄԱՑ

Այսօր կառավարությունը դե յուրէ կընդունի այն, ինչ մի քանի օր առաջ դե ֆակտո վարչապետը որոշել, հայտնել եւ վերջացրել է: Տագնապն այնպես է պատել իշխող ուժին, որ ամենօրյա ռեժիմով փորձում են ուղղել սխալները, որոնք կարող էին ազդել ընտրողի տրամադրության վրա: Կան մարդիկ, որ կենսաթոշակի 10 հազարի բարձրացումը, այն էլ՝ ոչ բոլորի

համար, գնահատեցին պոպուլիզմ, բայց եղան նաեւ գնահատականներ, թե սա ընտրակաշառք է: Դժվար է չհամաձայնել թե՛ մեկի, թե՛ մյուսի հետ: Սա պոպուլիստական որոշում է, որն իր էությամբ նման է ընտրակաշառքի:

Այսօր բոլոր տեսակի որոշումները երկրում կայացնում է մեկ մարդ, միահեծան: Կառավարությունը գոյություն ունի նրա մտահղացումներին պաշտոնական դիզայն հաղորդելու համար: Կառավարության անդամները եւ պատգամավորները պետք են շքախմբով պատարագի կամ ընտրարշավի գնալու, տեղ-տեղ՝ կարկանդակ, մյուս օրը մեկ այլ բան համատեղ ուտելու համար: Մնացած հարցերը Փաշինյանը որոշում է միայնակ: Մի գեղեցիկ առավոտ նա կարող է արթնանալ եւ գիշերային մտորումների արդյունքն անմիջապես հայտնել ընտրողին, առանց իր շքախմբին տեղյակ պահելու՝ առանց կառավարության քննարկման, առանց որեւէ մասնագիտական հաշվարկի կամ հիմնավորման: Այդպես եղավ թոշակի 10 հազարով ավելացումը, որը դեռ պետք է մեկ տարի վճարեն, թե ինչպես՝ թերեւս իրենց էլ դեռ հայտնի չէ: Մի բան կանեն, այս պահին կարեւորն ընտրվելն է:

Կենսաթոշակները 10 հազարով ավելացնելու խոսքն ուղղված էր 600 հազարի հասնող ոչ թե տատիկ-պապիկներին, այլ՝ կոնկրետ մեծ խումբ ընտրողներին: Այդ ծախսը չի դիտարկվել բյուջեի պլանավորման ժամանակ եւ տեղ չի գտել բյուջեի մասին պետական օրենքում: Ճիշտ հակառակը՝ այն ժամանակ ՔՊ-ականները՝ սկսած իրենց ղեկավարից մինչեւ շարքային քարոզիչ պատգամավորը, հիմնավորում էին, թե ճիշտ է եւ արդար, նաեւ՝ արդյունավետ, որ 10 հազարը կենսաթոշակառուներին տալու փոխարեն ուղղեն ապահովագրությանը՝ նրանց առողջական խնդիրների լուծմանը: Հայտնի բառերը Փաշինյանի՝ այն մասին, թե կենսաթոշակառուները չեն իմանա՝ ինչպես ծախսել այդ 10 հազարը, բոլորը հիշեցին, ու շատերը վիրավորվեցին: Ի դեպ, այդ գումարն առողջապահությանն ուղղելը սխալ չէր, սխալ էին ձեւակերպումները, հախուռն մտքերը, որոնք ստվերեցին, ըստ էության, այդ քաղաքակիրթ բարեփոխումը: Ինչեւէ:

Եվ այս փուլում անգամ բառի սխալը շտկելու են՝ ծախսով, ամեն գնով, որեւէ կերպ, որպեսզի ստանան քվե ու էլի տարիներ կարողանան խոսել՝ անհաշվետու եւ հախուռն, գործել՝ անպատասխանատու եւ սխալ, կարեւորը՝ միանձնյա: Հետո, դե ինչ՝ հետո, նորից ընտրություններից առաջ թոշակ կբարձրացնեն ու կջրեն իրենց բոլոր մեղքերը:

Իսկ ինչո՞ւ հանկարծ բարիացան ու որոշեցին սխալներն ուղղել՝ արագորեն: Ենթադրում եմ, որ ընտրություններից 3 ամիս առաջ իշխող ուժը նկատում է, որ ունի խայտառակ ցածր վարկանիշ, եւ վագրի թռիչքով փորձում է ներգրավել, գայթակղել մոտ 500 հազար ընտրողի: Կենսաթոշակառուն, որ վաղուց չէր տեսել թոշակի ավելացում, սա կգնահատի. հույս ունեն աճպարարությամբ՝ հատիկ առ հատիկ ընտրող սիրող ղեկավարները: «Մեր տատիկ-պապիկները մեզ սիրում են, մենք էլ իրենց ավելի շատ ենք սիրում»,- ասում է Փաշինյանը՝ անուղղակի շեշտելով, որ այս բարձրացումն այդ սիրո համար է. պետք է շեշտել ու ամրագրել՝ մենք իրար սիրում ենք, ուրեմն կընտրեք մեզ:

Դե ինչ, անկասկած է, որ կենսաթոշակառուների, այսպես ասած, սիրտները բարակեց՝ ուրախացան, եւ հենց այդ լուրի տարածման օրվանից զգացվեց, որ եղան մարդիկ, ովքեր գնահատեցին սխալի այդ ուղղումը, գոհացան: Բնականաբար, խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր իրենց սերն այդ 10 հազարով ի վիճակի են չափել. նրանք կարտահայտեն իրենց գոհունակությունը քվեարկությամբ:

Բայց եկեք չբացառենք, որ կան նաեւ կենսաթոշակառուներ, ովքեր տեսնում են այս սիրո կեղծավորությունը, հասկանում են, որ իրենց սիրաշահում են միայն մեկ բանի՝ ընտրվելու համար: Նրանք կստանան այդ գումարը ու, արդարեւ, իրենց պարտավոր չեն զգա՝ փոխհատուցել քվեով: Եվ, իհարկե, կան մարդիկ, ովքեր շատ լավ հասկանում են, թե որքան շատ են խաբվել հենց այս իշխանության կողմից, ինչպես են կորցրել Արցախն ու հազարավոր զավակներին՝ հանուն ոչնչի… ինչպես է հարձակման ենթարկվում ու վարկաբեկվում մեր Եկեղեցին, ինչպես են մարդկանց նետում բանտեր՝ խոսքի համար, ինչպես են իրենց խաբում ու սիրահետում՝ քվեի համար, ինչպես են խախտում օրենքներն ու Սահմանադրությունը եւ միահեծան թագավորության վերածում իրենց իսկ պատճառով վտանգի տակ հայտնված հանրապետությունը… Այդ մարդկանց առնել չի լինի:

Այո՛, կան մարդիկ, ովքեր այլեւս չեն ուզում այս կառավարությանը սիրել ո՛չ 10 հազարի, ո՛չ էլ 100 հազարի դիմաց: Եվ, ուրեմն, մեկ վագրի թռիչքով կամ ձիու քայլով ում կարելի էր առնել՝ առան: Լավ է, այդ մարդիկ, իրոք, իրենց պոտենցիալ ընտրողներն են, թող ընտրեն, չլինեն երախտամոռ, ինչպես մի քաղաքացի շեշտեց փողոցային հարցումների ժամանակ:

Բայց հանրույթը բազմադեմ է. կան, որ երախտամոռ չեն ու ոչ էլ ուրացող են եւ չեն ուրանալու ամեն ինչ՝ միայն բարձրացված կենսաթոշակի համար: Սխալների ուղղման այս շրջանում էլի բազմաթիվ պոպուլիստական քայլեր կտեսնենք, ու լիքը սիրառատ հայտարարություններ կլինեն: Բայց կան սխալներ, որոնք նրանք ուղղել չեն կարող, ըստ ամենայնի՝ չեն էլ ուզում: Իսկ եթե ուզեն էլ՝ չեն կարող: Աններելի սխալներ՝ ուղղված մեր պատմությանը, մեր հիշողությանը, մեր անցյալին, մեր էությանն ու համազգային իղձերին: Սխալներ՝ այնքան բեկումնային ու անշրջելի, որ նրանք այս երեք ամսում ուղղել չեն կարող, եւ, ցավոք, գուցե այլեւս ոչ ոք նրանց գործած սխալներից շատերը երբեւէ ուղղել չի կարողանա, ուստի դրանք նրանց ներել որեւէ կերպ հնարավոր չէ:

Շաքե ԱՎՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 5.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՇԱՐԺԵՐԻ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ

Ներկայիս Արեւելքում իրավիճակի էսկալացիան նույնիսկ եթե հաջողվի մեկ ամսում դադարեցնել ու հասնել խաղաղության վերականգնման, միեւնույն է, չափազանց ծանր, եթե չասենք՝ անդառնալի հետեւանքներ է ունենալու աշխարհի ու հատկապես հարեւան շրջանների վրա: Արդեն իսկ վերլուծաբաններն արձանագրում են, որ մեծ հարված է հասցվել Պարսից ծոցի երկրների եւ արաբական միապետությունների գործարար համբավին:

Բացի այդ, արդեն շատերը նշում են, որ ապագայում հարցեր են առաջանալու, թե որքան նպատակահարմար կլինի ամերիկյան բազաներ ունենալ իր տարածքում՝ որեւէ երկրի համար, եթե ամերիկյան քաղաքականության հետեւանքով կարող են դրանք դառնալ հարվածի թիրախ՝ իրենց էլ դարձնելով հարվածի թիրախ: Բացի այդ, ներկայիս էսկալացիան ցույց տվեց, որ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Քաթարը, Բահրեյնը, Քուվեյթը, ԱՄԷ-ն կամ Սաուդյան Արաբիան, իրականում ունեն անվտանգային լուրջ խնդիրներ, ու «սեւ ոսկու» բերած անհամար դոլարային կապիտալները հրթիռակոծումների դիմաց, ինչպես ասում են, դեռ երաշխիք ու ապահովագրություն չեն, երբ հակառակ կողմում գաղափարականացված ու մարտական տրամադրված կրոնապետությունն է:

Մյուս կողմից, սկսած այս պահից, գոնե կարճաժամկետ հեռանկարում արաբական միապետություններում էլիտաների համար, բացի անվտանգային եւ իմիջային խնդիրներից, ի հայտ են եկել նաեւ այլ խնդիրներ՝ դիրքորոշման խնդիրը: Բոլորը քննարկում են ստեղծված իրավիճակը, այն, որ ռեգիոնում կարող է «մեծ հրդեհ» բռնկվել: Սակայն եթե սրանք, օրինակ, մեզ համար գոնե առայժմ տեսական դատողությունների թեմա են, ապա բահրեյնցու, քուվեյթցու համար սեփական մաշկի վրա ազդող խնդիր են, եւ արաբական միապետությունների բնակիչներն ակնկալում են, որ իշխանություններն ու էլիտաները գոնե ինչ-որ քայլեր ձեռնարկեն՝ հայտարարությունների ու արդեն ծաղրանքի առարկա դարձած «հորդորների» ու «մտահոգությունների» հռետորաբանություններից բացի: Իհարկե, դժվար է պատկերացնել, որ արաբական միապետություններն ուղղակի պատերազմի մեջ կներգրավվեն, սակայն դրանցում իշխող վարչակարգերն ու տիրապետող էլիտանեը թե՛ այժմ, թե՛ ապագայում իրենց քաղաքացիներին պետք է համոզեն, որ իրենց ձեռնարկելիք քայլերով՝ այսպիսի ճգնաժամային իրավիճակներում կենսունակ են: Հակառակ դեպքում, երկրների ներսում կարող է վստահության ճգնաժամ առաջանալ, ինչը կարող է նախադրյալներ ստեղծել ներքին քաղաքական ցնցումների համար, քանի որ այժմյան էսկալացիան կարող է խաթարել, չասելու համար՝ կործանել այդ երկրների ներսում եղած հանրային կոնսենսուսը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am